


U, U U U, F b f

ԵԶ.ԳԵՐԱ. ԲԵԿՈՒՐԵԱՆ. ԳՐՎԳԻՏԱԿԵՐ  
ԵՒ ՔԵՎԵՐԵԱՆ

## ՏԱՎՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

## ՏՐՁԱՆ ՄԻԱՎԵՐՑ



3600000

#### Ե ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՑ

1875

# ՅՈՒՅԱԿ ԳՐԱՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅԱ  
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎ, ԲԵԱՆՑ


ԵԽ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆՔ ՆՈՅԻՆ

ԴՐԱ ՓՐՈՒ

	ԴՐԱ	ՓՐՈՒ
Աղնէս . Հայերենէ վոլուց ՚ի Տամիլերէն Յ . Քիւրքճեանֆ . տպեալ 1872 .	4	
Աղօթաղիր. Աշխաղան տեղեաց , աշխաղիկ լեզուաւ .	2	
Անուշք ՚ի Ափան , ողեաց Մ . Թամթուլ . 1869 .	1	20
Առաքինութիւնն համբան , կամ Մենառոր մանկանց , թարգմանեց Տ . Հ . Թ . Ա .	7	
Աւատարան առնենի . Ա . Եկեղեցոյ մէջ կարդացուելիք աւետարաննեն . են .	30	
Աւետարան վաքը , Տպեալ 1867 .	6	
— Նոյնը կասկարանով . Տպեալ 1867 .	12	
— Նոյնը ձաշու . Տպեալ . 1868 .	30	
Բանավուառութիւն , աշխաղուու հետաց մէջ . Բ . Տիգ 1874 .	1	
Բացառութիւն Հարժարանն եւ զլիման եւ առաւառնեն ելոցոց չնորհալ . (*)	6	
Գասդիկ վերջին արքայ Հայոց Բագաստանի , ողբերգութիւն . Տպ . 1672 .	5	
Գործք Առաքելց , Տպեալ 1867 .	6	
Գործք Առաքելց , Տպեալ 1867 .	3	
Գովասանք . Տպեալ 1867 .	3	
Եղիշ , պատմութիւն Վարդանանց պատերազմին ընորի գործ նախնեաց .	7	
Երեւոյթ կրից . Տպեալ 1851 .	7	
Երկու խօսք , եկեղեցոյ պաշտօնէից ուղղուած . Տպեալ 1873 .	3	
Եփրեմ խորի , աղօթաղիրք , գործ նախնեաց , Գ . տպագ . 1870 .	7	
Զանազանութիւն հիմն դարտոց . Բ . տիգ . 1862 .	40	
Շնորհանդական թուղթք Եւերփախ Շնորհալոյ . Տպեալ . 1874 .	18	
Շանդարձան խրատու . Գ . տիգ . 1870 .	18	
Թափորի տետրակ տարեկան , Տպեալ 1839 . (*)	3	
— Նոյնը շարաթական . Տպեալ 1838 . (*)	2	20
— Նոյնը . Ս . Յակովիայ տաճարին մէջ կատարուած թափորներու համար	4	
Թուարանութիւն համառաւ , Ա . Պ . Փախազեանցի , Պ . տիգ . 1869 .	3	
Ժամանդիրք խոշորագիր . Տպեալ 1866 .	20	
Ժամանդիրք տառնի . Տպեալ 1870 .	50	
Խնդիր Ա . Տեղեաց եւ նորա պաշտօնական քննութիւնը . Տպեալ 1871 . (**)	6	
Խորհրդագութիւն Ա . սրատարագի , գործ նախնեաց . Տպեալ 1842 .	10	
Խորհրդաստոր Ա . սրատարագի , Տպեալ 1873 .	10	
Կարգադրութիւն տառջութիւն , Տպեալ 1871 .	5	
Կինասպառութիւն Բասքարաց , Տպեալ 1869 .	2	
Կրոակաղիր Հոգեշահ բանից , գործ Արդար Խոճնեց . Տպեալ 1853 .	6	
Կրոակաղիր Աւետարանական բանից . Գաս Ա . Ալմեն Պետրոս .	1	20
” ” ” Գաս Բ . Սամարացի .	1	20
” ” ” Գաս Պ . Որդիք Աստուծոյ .	1	20
Համարատութիւն Երկուսան տուքելոց , հանդերձ յաւելուածով .	4	
Համառառութիւն Քրիստոնէական ուսման , Տպեալ 1873 .	4	
Հայելի վիրաց . Տպեալ 1852 . (**)	6	

ԵԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԱՌԵՎՈՎԱՆԻՑ (\*) Նոյն գրքին հայուսագիւղ ըւայլ է ըստովնէ .  
ԻՌԵՎՈՎԱՆԻՑ (\*\*) բարբար սպասարշ ըւայլ .



# ԱՅ ԲՈՅ

ՏԱՐԱՆԵՐՈՒ ՏԱՐԵ  
ԹԻՒ 8.

ԱՄՍԱԳԻՐ

ՕԴՈՍՈՍ 31  
1875.

Ա.Զ.Ա.Յ.Ի.Ն., ԲՈ.Ն.Ս.Մ.Ի.Ր.Ա.Կ.Ա.Ն ԵՒ Գ.Ր.Ա.Գ.Ի.Տ.Ա.Կ.Ա.Ն

ԿՐԹԱՐԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

Դ.Ա.Ս.Ե.

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՄէց շնա Պիղատոս . առա եթէ այդպէս ի-  
ցէ . թագաւոր ովն ես զու : Պատասխանի ես թի-  
սուս . զու առես՝ թէ թագաւոր իշեմ . բայց ես  
յայդ իսկ ծնեալ եմ և ՚ի դոյն իսկ եկեալ եմ յայ-  
խարհ . զի վրացեց ճշմարտութեանն : առենայն .  
որ ՚ի ճշմարտութենէ և լու բարբառոյ իմայ . Առէ  
ցնա Պիղատոս . Զինչ է ճշմարտութենն . զայս  
իրեւ առաջ . դարձեալ ել առ Հրեայն և առէ  
ցնուաս . ես եւ ոչ մի ինչ պատմաս զտանեմ ՚ի  
նմա :

Ց.Հ. Ժ. 57-59 :

ՀՅՈՎ.ՄԱՅԵՑԻՆ Պիղատոս , ան-  
ուանեալն Պոնտացի , որ ծննդեամբ ,  
Փ

տաւղանդով կամ Հնարագիտութեամբ  
հասած էր բարձրագոյն պաշտօնի , երբ  
Հռովմէն ելու . Նըշաստան գաղնւ և  
Տիբերեայ կայսէր անուամբ զայն կա-  
ռավարելու համար , անշուշու ամենե-  
ւին ընախատեսեց , որ իր ստորին  
պաշտօնավարութեան հետ պիտի գայ  
միանայ մի մէծ եւ վատահամբաւ  
հոչակ : Պիղատոս զբաղուած էր նիւ-  
թական խորհրդներավ եւ իւր ապա-  
գայ պաշտօնավարութեան մէջ ուրիշ

22

բախտի երազներ կը տեսնէր։ Նա մեծացած էր իւր դասու մարդկանց պէս արհամարհել ամեն հաւատալիք, եւ ամենեւին չ'էր մոտածէր, որ իւր դաւառապետութեան սահմանագլուխն ոտք կոփելով՝ պիտի մանէր հրաշից երկիրն։ Զը գիտէր, որ այն օդն, զոր պիտի չնչէր, ծանրաբեռնուած էր մարդարէութեամբ։ Զը գիտէր, որ Հրէաստանի գերօրինակ երկիրն չնչասպառ կը հեծէր մի խորհրդաւոր ակնկալութեամբ։ Զը գիտէր, որ մի աստուածային տեսարան, մի սրանչելահրաշթար բացուելու վերայ էր, և նոյն նկքն Պիղատոս պիտի իւր գերը խաղարայս անհամեմատ տեսարանին մէջ, ուր Աստուծոյ տնօրէնութիւններն պիտի կատարուէին մարդկային աղդի համար Եթէ իւր առաջն քայլափոխին մէջ փառք կը նշմարէր Պիղատոս, այս փառքը քայլաբական երկնակամարին վերայ կը տեսնէր, ուստի, ընդհակառակին իւր աստղը պիտի ընկնէր, և ըստի ամենեւին, որ Նախախնամութիւնն հազարներու մէջն ընտրած է զինքն, որ մինչեւ ՚ի կատարած աշխարհի մնայ կատարեալ տիպար կրօնական անտարբերութեան։ Այսպէս խակ եղեւ։ Ինչ յատկութիւն, որ տանիք Պիղատոսին, թէ թոյլ մարդ անուանենիք, թէ փառաւ, ամենը դարձեալ կը պարունակին իւր անտարբերութեան մէջ։ Անտարբերութիւնն Պիղատոսի բնաւորութէ յատկական գծագիրն է, և այս յատկութիւնն է, զոր արժան է քննել։

Աւետարանիներն ինչ որ խօսած եւ աւանդած են մեզ, բոլորն այս անտարբերութեան կը վերաբերին, և այս բնաւորութեամբ է, որ կը ներկայանայ մեզ այս սոսկալի և աղետալի հըռչակաւ համբաւեալ անձն։

Բայց տակաւին մեր նայուածքն

սոյն անտարբերութեան տիպարին վերաց ըստ ձգած, բարձրացնենք զայն դէպ՚ի Յիսուս, որ մեր բնաբանին մէջ կը ներկայանայ հանդէպ Պիղատոսի։ Պանտացի Պիղատոս եւ ՅԻՍՈ՛ՒՍ։ Ի՞նչ հակապատկեր երկու անձանց մէջ։ Ի՞նչ անհամեմատութիւն երկուունց խօսակցութեան մէջ։

Հրէական կատաղի բազմութիւնն կը բերէ զՅիսուս Պիղատոսի առաջ և կը պահանջէ դատապարտել։ Հռովց մայեցի դատաւորն նախ կուզէ իմասնալ թէ ինչ յանցանք ունի Յիսուս։ Կատաղի բազմութիւնն Յիսուսի բարութիւններէն և յայտնի անմեղութենէն շփոթուած զրաբարտութեան կը գիմէ։ կ'ուզէ այնպիսի մեծ ամբատանութէ ամբատանել, որ զՅիսուս կորուսնէ։ Ոչ թէ կ'ուրանայ նորա ասաքինութիւններն ու բարութիւններն, այլ յանցանաց կը վերածէ և իրբեւ յանցանք կը մեկնէ։ Ամեն մարդ կը զարմանայ Յիսուսի վերայ, ամեն մարդոց երախատդիտութիւն կը ներշնչէ, եւ ահա այս ամեն աստիճաններն են, ընդորս նա դէպ՚ի գահն կը գիմէ։ Նա կը գիմէ սրտերն նուածելով և յափշտակելով, Նա կամի թագաւոր լինիլ Հրէրէից, և ով կարէ տարակուսիլ այս մասին, քանի որ նիքն իւր բերանով կը խօսի։ Այս կերպիւ կը մեկնէ ահա Հրէական բազմութիւնն Յիսուսի Քըրիստոսի ընթացքն ու գործերն։ Այն ամբատանութիւնն այնչափ յառաջ գնացած է, որ այլ եւս ապացուցի կարութութիւն չէ մնացած։ Ամբատանսզք և զրաբարտիչք կ'աղաղակեն, Պիղատոս կը շուարի, մի կողմէն զըրպարտիներուն կը նայի, միւս կողմէն Յիսուսին, որոյ վերայ մինչեւ ցայնվայր ուշագրութիւն գարձուցած չէր։ ուստի և կամի հարցափորձել և քննել զՅիսուս։

Որչափի կոփշի Պիղատոս , երբ կը տեսնէ թէ այս տարօրինակ ամբաստանեարն , վախանակ իւր անձն պաշտպանելու , դատապարտութիւնն առաջն կը մղուի , տակաւին մանրամասն ըլքնառած իւր ամբաստանութիւնն կը ծանրացնէ եւ երբ դատաւորն կը հարցնէ . “ Զի՞նչ գործեալ է քո՞ , այս խօսքերով կը պատասխանէ . ” Իմ արքայութիւն ( ուրեմն արքայութիւն ունի ) չէ յայսմ աշխարհէ . եթէ յաշխորհէ աստի եր արքայութիւնն իմ , սպասաւորքն իմ մարանցին արքեօք՝ զի մի մասնեցաց Նրէից . բայց արդ թագաւորութիւնն իմ չէ աստիու (ԱՌԴ . ուրեմն եթէ ոչ այժմ , անշուշտ մի որ պիտի թագաւորէ ) :

Ուրեմն Պիղատոս այլ եւս հարկադրուած կամ ստիպուած չէ ամբաստանալիներէն . վասն զի ամբաստանելցն խօստավանութիւնն ինքնին իրաւունք կը ասց ամբաստանողաց : Բայց որչափ որ այն կամովին և աներիւղ խօստավանութիւնն ինքնին ՚ի դատապարտութիւն կը տանի , սակայն այնչափ տարօրինակ է , որ հարկ է հաստատել և այնպէս վճիռ տալ : Պիղատոս մի երկրորդ յատուկ հարցումն եւս կ’առաջարիէ , որոյ մէջ դատապարտութեան նիւթն պարզապէս և բառ առ բառ որոշուած է . “ Ուրեմն թագաւոր ես դու ո : Այն ժամանակ տիեզերաց թագաւորի բերանէն այս նշանաւոր խօսքերն կ’եննեն . ” Դու ասե՞ թէ թագաւոր իցեմ . բայց ես յայդ իսկ ծնեալ եմ և ՚ի դայն իսկ եկեալ եմ յաշխարհ , զի վլոյցեցից ճըշմարտութեանն , ամենայն , որ ՚ի ճըշմարտութենէ է , լոէ բարբառոյ խօյոյ :

Ակզրէն մինչ ՚ի վախճան ի՞նչ տարօրինակ տարաւորութիւնն պիտի անէնին այս պատասխաններն Պիղատոսի վլոյս : Առաջն խօսքերէն Պիղատոս

այնպէս կը կարծէ , որ իրեն ներկայացած ամբաստանեալն մի այլանդակ վառասէր մարդ է , որ իւր դիտաւորութիւններն ՚ի կատար հասուցանելու համար բնաւ պատրաստի միջոցներ չունի և սակայն այնչափ վատահէ կատարման համար , ամենեւին ըլք կեղծէր , այլ յայտնապէս կը խօսի : Բայց յետագայ խօսքերէն Պիղատոսի գաղափարներն բոլորովին կը շփոթուին . “ Եւ ՚ի դայն իսկ եկեալ եմ յաշխարհ , զի վլոյցեցից ճըշմարտութեանն ո : Ի՞նչ պաշտօն մի թագաւորի համար . ի՞նչ տարօրինակ թագաւորութիւն . ի՞նչ շփոթութիւն գաղափարաց : Պիղատոս , որ ամենեւին կարող չ’ը ամենափոքր յարաբերութիւն նշմարել այսպիսի անհամաձայն գաղափարաց մէջ , իսկոյն ինքնին վճռեց , որ գործ ունի ոչ թէ վառասիրի , այլ մի երազագիտի հետ : Երազագէտ , ահա քեզ արժանի առարկայ դատաստանական . քննութեան . ահա քեզ արժանի պատճառքաղաքագիտիստական յուղման : Պիղատոս հասկացաւ իւր գործն և այս արհամարհական հարցումն առաջարկեց ամբաստանելցն . ” Զի՞նչ է ճըշմարտութիւնն ո . և պատասխանեցն ըլք սպասելով գարձաւ գէտ ՚ի Նրէաներն եւ ասաց . “ Ես՝ և ոչ մի ի՞նչ պատճառք գտանեմ ՚ի նման :

Ամենայն ինչ վսեմէ այս խօսակցութեան մէջ , վսեմէ ՚նա և Հռովմայեցոյն վլոյնին խօսքերն : Ա՞վ կարող է ըլք զարմանալ Յիսուսի Քրիստոսի բացարձակ պատասխանելոյն վլոյայնա թագաւորէ , բայց ի՞նչ կերպիւն ի՞նչ բանի մէջ կը կայանայ նորա թագաւորութիւնն : Արտաքին նկատմամբ թագաւորութիւնն է արժանաւորութեան ամենաբարձր աստիճան , որում մարդ կարող է համնիլ իւր նմանեաց մէջ : Բայց յայսմանէ թագաւորութիւն

է մի կամքի անդիմաղբելի տիրապետութիւնն հազարաւոր նուածեալ կամաց վերայ : Արդ՝ այս երկու նկատմամբ եւս թագաւորական տիսղոսին արժանանալու համար ոչ գահ պէտք է, ոչ գանձ, ոչ երկիր, ոչ զօրք : Կան մորով թագաւորովներ, որոց թագն աւելի մեծ փայլ կ'արձակէ, եւ որոց տիրապետութիւնն ոչ այնչափ զգալի է և ոչ այնչափ երկիւղալի, և սահայն աւելի իրական է, աւելի ընդարձակ և աւելի անփոփխ : Հանձարն կը թագաւորէ հոգիներու վերայ, կը թագաւորէ գերեզմանի խորեն, կը թագաւորէ այն սերնդոց վերայ, որք տակաւին յաշնարհ եկած չեն և նորա ոչ փառքն կը յափշտակուի իրամէն և ոչ արթապետութիւնն : Եթէ այսպէս է, ուրեմն ինչու աւելի ընդարձակնք թագաւոր տիտղոսի բացատրութիւնն . ինչու զանանք այս ափտղոն նորան տալու, “Որ եկած է յաշնարհ ճշմարտութեանն վիսյելու” :

Ճշմարտութեանն կ'ասեմ, որ ՚ի վերէ քան զնիւթ, վասն զի մտածութիւն է. ՚ի վերէ քան զմտածութիւն . վասն զի մտածութեան օրէնքն է . ՚ի վերէ քան զիարձիս . վասն զի կարծեաց դատաւորն է, ՚ի վերէ քան զիկամս . վասն զի կամսց կանոնն է: Ճշմարտութեան կամմ, բայց ոչ թէ մի որ և իցէ մասնաւոր ճշմարտութեան, այլ նոյն իսկ ճշմարտութեան, ճշմարտութեանն Ապարածոյ, ճշմարտութեանն որ արարածոյն իւր արարչն հետ ունեցած յարաբերութեանն կը վերաբերի, ճըշմարտութեանն, որ մարդկային բուն կենաց և վախճանին կը վերաբերի, ճըշմարտութեանն, որ ամեն ճշմարտութիւններ յինքն կը բովանդակէ և ամեն ճշմարտութիւններէ տեւական է և անմահ, և որ միայն է համարատսիսան ամեն յաւիտենական ստու-

գութեանց և իրականութեանց : Նա, որ սոյն ճշմարտութիւնն իւր անհուն ընդարձակութեամբ յինքն կը բովանդակիր, եւ նորա մէջ կ'ապրէր . նա, որ մի անձնաւորութիւն կը կազմէր նոյն ճշմարտութեան հետ եւ ասաց իւր աշակերաներուն, “Ես եմ ճշմարտութիւն, նա թագաւոր էր, թէ ոչ

նորա թագաւորութիւնն ՚ի վերէ չը արդեօք ամեն բանէ, ինչ որ թագաւոր անունն կարող է կը ել երկրիս վերայ : Եւ եթէ թագաւոր ըեն թագաւորութիւն կ'ենթագրէ և հպատակներ . միթէ այս հըպատակներն եւ թագաւորութիւնն կը պակասէին Յիսուս Քրիստոսին : “Ես մենայն, որ ՚ի ճշմարտութիւնէ է, լսէ է, լսէ բարբառոյ իմոյ ո: Ահա աերութիւն առաւել բացարձուկ և միահեծան քան կեսարներու կայսերութիւնն, առաւել խոր՝ քան հանձորց տիրապետութիւնն : Ով որ Յիսուսի ձայնն կը լսէ, իւր բովանդակ կեանքն նորան կը հպատակցնէ, նորան կը հընազանդի ամենայն հնազանդութեամբ և պաշտելով զնա ՚ի վեր կը դասէ քան զամենայն իշխանութիւնս և քան զամենայն պետութիւնս և կընդունի, որ անսահման իրաւունք ունի նա ոչ մի այն իւր կենաց, այլ և իւր ներքին եւ ութեան վերայ : Հաստատուած է ուրբեմն նորա թագաւորութիւնն : Դուք ինքնին դատեցէք, “Ես թագաւոր է, նա ծնուած է թագաւորութեան համար ո: Ի խորս աստուածային էութեան յաւիտենական բան Աստուծոյ, բան անլոնդ հատ ճառագոյթեալ ՚ի ծոց Հօր, բան, որ կոչումն ունէր ՚ի յաւիտենից տիեզերաց մէջ ցոլացնել Աստուծոյ լոյն և հնչեցնել իւր իմաստութիւնն, այս աստուածային բանն նշանակուած էր դահուռ համար, եւ այս դահուռ բարձրանալու համար էր :

որ նա ՚ի յաւիտենականութենէ ՚ի ժամանակաւորն իջնելով՝ ծնաւ իբրեւ մարդ և մարդկանց մէջ շրջեցաւ։ Յաւիտենականութենէն իջաւ բարձրաւ նալ ՚ի գահ, նաև ՚ի խաչ, վասն զի նայալսարհ եկաւ ոչ միայն ճշմարտութիւնն հաշակելու, այլ նաև ճշմարտութիւնն վիպյելու համար։ Այս ճշմարտութիւնն, որց համառօտոտութիւնն է անձնութիւնը, նա ինքեց զայն իւրա անձն նութիւնով, ՚Ծնուած էր նա թագաւորութեան համար և այն թագաւորութիւնն ստացաւ ոչ միայն իբրեւ ժառանգութիւնն, այլ իբրեւ յազիթանակ իւր վիպյութեան։ Ահա սյա պատճառաւ սյն հղօր թագաւորն ընդ առաջ ելանելով վրէմինդրութեան, կ'արտասանէ թագաւոր բառն, որով զինքն չառչորանաց պիտի մատնեն, յօ ժարակամ՝ կը վիպյէ ճշմարտութեանն և սյապէս կրկնակի հիմումք կը հաստատէ իւր թագաւորութիւնն, թէ փառօք ծննդեան եւ թէ փառօք մարտիրոսութեան։ Տես, տես ուրեմնն, ալ Պիղատոս, թէ ճշմարտապէս թագաւոր է արդեօք քո հանդէպ կանգնած մարդն, թէ ոչ Բայց ինչ պէս կարող ես գու տեսնել, Դու մինչ չեւ անդամ չես հաւատար ճշմարտութեան գոյութեանն։ ՚Զի՞նչ է ճշմարտութիւնն կը հարցանես գու։ ՚Զի՞նչ է ճշմարտութիւնն։ Այս խօսքը իւր տեսակին մէջ, համեմատելովքի զի հետ խօսակցող աստուածային անձի խօսքերուն հետ։ Ո՛վ պիղատոս, մարդկութեան մէծ մասն քո բերանով կը խօսի. ՚Զի՞նչ է ճշմարտութիւնն։ Այս է նշանաբան անտարբերութեան, այս է բարբառ ներկայ դարուս։

Ցիսուսի Քրիստոսի խօսքերն հասկացանք. Ցիսուսն ճանաչեցինք, աշխատինք ճանաչէլ այժմ զՊիղատոս, նրբ կ'արտասանէ Պիղատոսթէ. ՚Զի՞նչ

ճշմարտութիւնն ու ամենեւին զիտաւ լոգութիւն չ'ունի ուրանալ և արհամարհէլ ամեն ճշմարտութիւն։ Իբրեւ աշխարհի մարդ, իբրեւ պաշտօնակէր մարդ, նա գիտէ, որ կան մարդկանց համար հասկանալով ճշմարտութիւններ և զիտէ թէ ինչ արժէք ունին սցին ճշմարտութիւններն։ Նա ականչ գրաւ Ցիսուսի Քրիստոսին (եւ քանի քանի մարդիկ նորա հետ) որ կը քարոզէր այն երկրորդական ճշմարտութիւններէն մի քանիսն, որք մեր անցաւոր կենաց կը վերաբերին։ Այսպիսի ճշմարտութիւններն, Պիղատոսէն ոչ առաջ և ոչ յետոյ, մարդկային աղդին անհամաց չ'են երեւցած։ Այսօր իսկ միշտ ծարաւի են մարդիկ այս ձըշմարտութեանց և անխօնի կ'օրոնեն։ Թէ քանի քանի զանքեր եւ զոհողութիւններ ՚ի գործ կը գնեն սյս օդաւակար ճշմարտութիւններն ստանազու համար, զարմացան անժանի է։ Անցաւոր կենաց վերաբերեալ ճշմարտութիւններն այսպէս անյագութեամբ կ'որոնուին։ Այս կէտէն զննելով աշխարհական գոգցէս գրկած է Աւետարանի սյս խօսքն որ կ'ասէ. լոյն է գուռն և և ընդարձակ ճանապարհն, որ տանի ՚ի կորուսու. և անձուկ է գուռն, որ է ճանապարհ կենաց։

Պիղատոսի արհարմարհանքն մեծ ճշմարտութեան, կրօնական ճշմարտութեան համար է։ Նա լաւ կը հասկանաց, որ Ցիսուս սյս ճշմարտութեան համար կամի խօսիլ, ուստի և կը պատասխանէ. ուր է սյս ճշմարտութիւնն և ինչ կամի, որ անենք սյս ճշմարտութիւնն։

Ամեն կրօնական կուսակցութիւններէ, բաժանումներէ և նաև համազումներէ արտաքյ մէկ անորիշ և խոպան դաշտի վերայ, որ անտարբերութիւն կ'անուանի, կան մի դասակարգ

մարդիկ , որոց համար այսպիսի հարցումներն ու զբաղութիւններն բոլըրավավան տուարտափի կ'երեւին , և նեքքանք խելուարտի են մարդկային տեսառկին մէջ . վասն զի ոչ իրենց բնաւորութիւնն ու բոշող յատուկ զգացածութիւններ ու նին , ոչ ատելութիւն կոմմ ուր կը զգան կրօնի համար , և ոչ երկիւղ կամց ցան . կութիւն ունին կրօնի նկատմամբ : Կան նոցա շուրջն մի կարգ մարդիկ եւս , որք նոցա նման դէպ ՚ի յերկիր խոնարհեալ և երկրայիններով զբաղեալ , մերթ ընդ մերթ կանգ կ'առնուն , առ վայր մի կը կընդ հատեն իրենց երկրաւոր տշխատանքն , և յանկարծական մասածութեամբ ըմբռնեալ , մի երկչօտ նայուած կը ձգեն դէպ ՚ի երկինք և կը հարցանեն ինքնին . — Ես , որ կըզգամ՝ թէ կ'ապրիմ . ես , որ սկսած եմ գոյութիւն ունենալ . ես , որ սցն օրէն երեսուն կամ քառաւասուն տարի յազաջ ը կայի երկրիս վերսյ և սակաւ տարիներէն զինի դարձեալ պիտի ըլենիմ . ես որ կը ճանաչեմ , թէ էական տարբերութիւն կայ բարւոյն և չարին մէջ , ինչպէս սեւին և սպիտակին մէջ , եւ այս տարբերութեան ազդեցութեամբ կըզգամ , որ մի ուրիշ աշխարհի կը պատկանիմ ես , քան թէ այս գոյներու և ձեւերու աշխարհին . ես , կասեմ , էակս բանական , բարսյական և պատասխանատու , ես՝ ուստի ելած եմ և ուր կ'երթամ : — Երկրորդներն այսպէս կը խօսին ահա . իսկ առաջներն ենդ հակառակին այնպէս կը կարծեն , որ իրենց կեանքն սահմանափակուած է միայն ծննդեան և մահուան մէջ , իրենց արժանաւորութիւնն կը կայանայ ՚ի մէջ երկուց սահմանաց վատանունութեան եւ մարդկային փառաց , իրենց երջանկութիւնն կըդտնուի այն հորիզոնն մէջ , որոց եզրերնեն մի կողմէն բնութիւնն և միւս կողմէն երկ-

բաւոր յօժարութիւններն , սորա անխուալ և անսասան յառաջ կը դիմեն մի անդունդէ , որոց վերայ յիշովութիւն չըւնին , դէպ ՚ի միւս անդունդն , որոց վերայ գիտութիւն չ'ունին , և այնպէս վատահ են , որ գոզցես իրենց ընթացած ճանապարհն յաւխտենական է կամ իրեւեւ թէ իւրաքանչիւր առաւ ևս իրենց մոաց համար մի անանց սահման է : Երբ մեղուն իւր բնիներն կը ծրագրէ և կը պատրաստէ . երբ միջիւնն իւր ամբարներն կը փորէ , պիտի կարծուի ուրեմն , որ զբաղուած են մի վերին աշխարհի և մի ասրագոյ կենաց համար : Անցաւոր բաներով պարապաղներն մարդկային բնութեան ամենէն ազնիւ տարրն , որ է նորա կը քրօնական զգացումն , առ ուն կը կոխեն անցաւոր ուրախութեանց և կենաց հոգսերու մէջ և ՚ի վերջը բոլորավին անտես կը լինի մարդոյ աչքէն և կը մոռացուի : Մարդն կը գործէ ոչ իրեւեւ ճարդ , այլ իրեւեւ մեղու եւ միջիւն :

Բայց որովհետեւ կան մարդիկ ես , որոց համար անտես եղած չէ կըօնական զգացումն ուշարժմաւմն , այսպիսի մարդիկի բնէ կը մատածեն արդեօք , երբ կը տեսնեն , որ իրենց շուրջն կան մարդիկ , որք կը ձգամին դէպ ՚ի անտեսանլին և անփոխիմն . աշխարհի մէջ են , բայց մի ուրիշ աշխարհի վերայ կը մըտածեն և կը խորհին : Կրօնի զգացումով վառուած այս մարդիկներու վերայ առաջներն չեն խօսիր , այլ կը տեսնեն և կը լսեն , և սակայն նոցալութիւնն մի խօսք է , և բնէ այս խօսքն : Նոքա լուելեայն մեզ կ'ասեն , — կըօնասէր մարդիկն իրենց բնութենէն տարբեր մարդիկ են , առանձին ճաշակ ունին . կըօնասիլութենէն հաճառութիւն կըզգան , առանձին ճանապարհ ունին և այնպէս կընթանան .

մէնք չենք պախարտիկէք , թող սիրեն  
կրօնքն , Խակ մէք ոչ ժամանակ ունինք  
և ոչ կարօսութիւնն կը զգամք նոցա հե-  
տեւելու . հետեւապէս կրօնքն մեզ չը  
վերաբերիք : Երբ Նրէայք իրենց օրէն-  
քէն վրայութիւնն կը բերէին , Պիլա-  
տաս կ'առէք . “Միթէ ես Նրէայ եմ” :  
Այսպէս կ'առեն Ճիշդ նաեւ լուս ան-  
տարբերներն , միթէ մենք կրօնասէրէն  
եմք . բայց չեն գիտեք , որ սոյն խօս-  
քէն այս հետեւութիւնն կելնէ . — մի-  
թէ մէք մարդ եմք : Խւրաբանչւրս  
մեր ճանապարհն երթանք , կը յարեն  
նոքտ , բաւական է , որ իրարու վնաս  
չը պատճառ ենք : Կարեւոր խնդիրն այն  
չէ , որ մենք ուրիշ բան կը մտածենք ,  
նոքտ ուրիշ , այլ այն է , որ իրարու  
խափան չը լինիք և կամ վնաս պատ-  
ճառ ենք : Ժամանակն կարճ է , վայր-  
կ'աններն սախողական , գործքերն  
շատ , թող իւրաքանչւրս մէք գործն  
յառաջ տանենք . թող նոքա արգելք  
չը լինին մեզ , և մէք բնաւ արգելք  
չենք լինիք նոցա . կ'ուզեն գործեն ,  
կ'ուզեն ոչ :

Որչափ հարցումներ որ առաջարկենք այսպիսի մարդկանց , որչափ որ հետամուտ լինինք , պիտի տեսնենք , որ նոքա ըստ գիտեն թէ Բ'նչ է ճշմարտութիւնն . և եթէ շատ ստիպենք , պիտի պատասխանեն , որ այսպահ միայն գիտեն , թէ ըստ կայ ճշմարտութիւն . և պիտի պատասխանեն այսպէս :

“ Ա ինչ և լինի Ճշմարտութիւնն , ա  
մենեւին յարաբերութիւն ըստնի իրա-  
կան կենաց հետ : Առանց Ճշմարտու-  
թեան կարող է մարդ հարատանալ ,  
պատույ հասնիլ , մեծ լինիլ յաչս մարդ-  
կան և առ հասարակ կանոնաւորել իւր  
ընթացքն , ինչպէս որ պէտք է : Ճա-  
նապարհն գծուած է . ուղին հարթ .  
աշխարհի պէս հին մի քանի սկզբունք .

ներ բաւական են մորդոյն իւր գործ-  
քերն տնօրինելու , միայն թէ կարողա-  
նայ բառ աեզզոյն և բառ պարագային  
՚ի կիր առնուլ և իւր վիճուկին յարմար-  
ղնել . Մասց մեծամեծ զննութիւն-  
ներն ու փարզապետութիւններն եւ  
ոչ մի համեմատ թիւն ունին սովո-  
րական կենաց խնդիրներու հետ , այլ  
շատ անդամ օտարօտի են և ներհակէ  
ի՞նչ են զննութեան սովորական հե-  
տեւանքներն , եթէ ոչ շփոթութիւն ,  
տարակյաս և տագնապ մոտաց : Եթէ  
ձշմարիսէ , որ մահուան վերաց խոկտ-  
ըն առերելք կ'արդելու , ևս առաւել  
ձշմարիսէ . որ Աստուծոյ վերաց խոր-  
հին գործելէ կ'արգելու :

“Նիշտոք թէ կը օնական ճշմարտութիւնն փախանակ վեսասելու օգտակար ևս լինէր, միթէ հարկ կա՞ր զայն զբանալու, և ո՞լ պատճ է մինչեւ ցարդ ։ Ոմանք կը պարծին եւ կը վքանան, թող բարեաւ վայելեն իրենց հաճելի երաժշեքն, մենք չենք բառնար իրենց հաճցըն, և ոչ կը մասնակցինք ։ Վասն զի մենք չենք հաւատար նաեւ, որ ճշմարտութիւնն զիւրամատցց լինի ։ Մի ապացոյն մեզ բաւական է ։ Ահա մի կողմէն կան մարդիկ, որ ճշմարտութիւնն միայն այս ինչ կարծեաց մէջ կը տեսնեն, եւ ահա միւս կողմէն կան մարդիկ, որ այն ինչ կարծեաց մէջ կը տեսնեն, և այնոքէս համոզուած են ։ Ո՞ր կողմն է ճշմարտութիւնն, մեք չը գիտեմք, բայց միայն կը տեսնեմք, որ մարդ կարող է հաւասարապէս համոզուած լինիլ ինչպէս ստութեան, նցնալէս և ճշմարտութեան մէջ ։ Եթէ ճշմարտութիւնն երեւէր երկրիս վերայ, պէտք էր, որ աիրէր ամեն մարդց մըտաց վերայ ։ Բայց քանի որ տիրած չէ, մենք չենք կարող հաւատալ նորա ներկայութեանն ։ միակ ճշմարտութիւնն համոզամներն են ։ Մարդ ինչ բանի

որ կը հաւատոց , իւր ձշմարտութիւն նըն այն է , այս է ահա միակ իրական կը : Առ է , որ իւրաքանչիւր մարդ իւր համոզումն ամուր բռնէ և ըստ այնիւ իւր կետեկն տնօրինէ : Մեք կարող եմք ասել , որ մեք համոզման համեմատ մեք կետեկն կը սնօրինենք , ար համար հելով այն խուզարկութիւններն , որք աւելորդ կ'երեւին մեզ . և ահա ըստ մեք գատողութեան մենք եւս ձշմարտութեան մէջ եմք :

“ Իրաւ է , որ մեք շուրջն կրօնական իրողութիւններ շատ կան , որք երկար ժամանակէն ՚ի վեր սովորական եղած են մեր բնակած երկրին մէջ , եւ մեք պատշաճ կը դատիմք արտաքրուստ միայն յարմարիլ այս սովորութեանց և այս դժուարին բան չէ : Մեք չենք ուզելու բնաւ ոչ մեր և ոչ աշխարհի հանդըստութիւնն խռովիլ մի պարզ գոզափարի համար : Աչ մեր կարծեաց վերայ համոզուած եմք եւ ոչ այլոց . մեք կարծիք եւս շունիք բնաւ : Մեք չեմք ուզել յառաջամարտիկ լինիլ մի կարծեաց համար և առ այս դիմագորակել ՚ի մարտիրոսութիւն : Ձշմարտապէս ամենէն մեծ աստուածսիրութիւնն ու վիլխատիսյութիւնն այն է , որ հետեւինք այն սովորութեանց , որոց մինչեւ ցարդ հետեւած են . և այսպէս ահա օրհնել կը տանք մեր ամուսնութիւններն , միլուն կը տանք մեր զաւակներն , թաղել կը տանք մեր ննջեցեալներն , հետեւելով այն եկեղեցւոյ արարողութեանց , որոց մէջ նմուած եմք : Այս եղանակն եթէ օգուտ չ'ունի , վեսա եւս չ'ունի բնաւ . կամ աւելի լաւ է ասել , օգուտ ունի , որով հետեւ այլոց խաղաղութիւնն չը խըսովիլ :

“ Ի՞նչպէս կարելի է ընշմարել , որ ամեն պատահմանց մէջ մեր այս գըրութիւնն օգտաւէտ է : Այն մարդի .

կըն , որոնք որ և իցէ մասնաւոր համոզումն կ'ընդունին կրօնական նիւթեց նկատմամբ , յայտնապէս կը դիմէն դէպ 'ի վտանգ : Եթէ լաւ ձանապարհի վերայ են , լաւ է , եւ դուք կ'ասէք թէ ահա փրկուած են , և մեք կը հաւանիմք . իսկ եթէ վտան ձանապարհի վերայ են , կ'ասէք թէ ահա կրոսուած են : Արդ ինչպէս տռաջիններն լաւ համազուած չէն , նոյնպէս և վերջիններն Ուրեմն երկարեան ևս շփոմիխաղ մի խաղացին : Պէտք է , որ մեք աւելի խոհեմ եւ աւելի իմաստուն լինիմք : Պէտք է , որ այս երկու վտանգաւոր ձանապարհի մէջ աւելի ընթանամբ : Ձշմարիտ է որ կարող չեն ձշմարտութեան բարեկամաց մէջ հաշուել զմեզ , եթէ կայ ձշմարտութիւն , բայց աւելի ձշմարիտ է , որ թշնամեաց մէջ եւս կարող չեն հաշուել : Մեք անտարեր եմք և այս բառն միայն խկապէս ցոյց կը տայ մեր կացութեան վկեմութիւնն : Անտարբերութիւն բառն խակ մեզպէս անտարբեր է . իրաւ է փայլուն չէ , բայց գոնէ ապահով է :

“ Ամենէն լաւն այս է , որ մեր նմանեաց մէջ ոչ ոք կարող չէ գանգատիլ , վասն զի մեք և ոչ մի կուսակցութեան բարեկամէմք , այլ բարեկամ եմք ամենուն : Իւրաքանչիւր կարծիք անպատճառ հակառակ է մի այլ կարծեաց : Մեք , որ ամենեւին կարծիք չունիմք , կարող չեմք ոչ թշնամի լինիլ այլոց , և ոչ այլոց թշնամութիւնն գրգուել մեր վերայ : Շատ փափագելի էր , մարդկային աղդի խաղաղութեան համար , որ բոլոր աշխարհ մեզ նման անտարբեր լիներ . բայց գիտեմք , որ այս անկարելի է . թող ուրեմն իւրաքանչիւր ոք իւր համոզման հետեւի . եւ թող ներեն մեզ , որ մեք բնաւ համոզումն չունիմք ” :

Այսպէս է ահա Պիղատոսի և ա-

մեն անտարբերներու մասնութիւնն ,  
որ իւր խանձարուրն պատռելով եւ  
յերեւան գալով արձակ համարձակ  
կը քարոզուի : Քննեմք ուրեմն ուշա-  
զրութեամբ , և ապա անշուշտ կարող

եմք դատել , թէ արդի ոք անտարբեր  
յատկութիւնն իշապէս մի անտարբեր  
կացութիւն է , թէ ոչ :

( Եւրոպականի լու : )

## ԾԱՂԿԱՔԱՂ ԱՄԵՐԻՔԱԿԱՆ

ՀԱԿԱՑ ՔՈՎ ։ ՔԱԼ. Ե 1. 6.

Հին Կտակարանին մէջ ահճ մի շը-  
կոյ՝ որ իմ վրաս այնշափ մեծ նուրիա-  
կան յարդանք մի տպաւորէ , որշափ  
Արքահամ . Իր աղնուականութեանը  
տիտղօմն այս էր , “ Անիկոյ Աստուծոյ  
բարեկամն էր ո : Սաբական կռապաշ-  
տութեան մէջ ծննծ և մեծցած , Տի-  
րութ ինքնիշխան կամօքը եւ այնպիսի  
միջոցներով , որ մեզ անձանօթ են , Աս-  
տուծոյ հաւատաց : Անոր վրայ առա-  
ջին սորվածնիս , Աստուծոյ զԱրքահամ  
անակնկալ յանկարծ կոչելն է ըսելով ,  
“ Քու երկրէդ և քու աղքականներէդ  
և քու հօրդ տունէն ելի՞ր և գնա՞ այն  
երկրը զոր քեզ պիտի ցուցնեմո՞ :

Արքահամ կը հն սպանդի : Անիկա  
հարցմաններ զնիէր : Իր երթալու օ-  
տար երկրին համար աշխարհագրական  
տախտակ մի կամ առաջնորդող Գիրք  
մը ( Gide ) իրեն ցոյց չի տրու իր : Հա-  
ւատքով իր ընտանեկան կարավանովս  
ճամբայ կ'ելնէ եւ երկնային Զեռքին  
առաջնորդութեանը կը հետեւի . . . .  
Անիկա Ճամբայ ելաւ . “ Ուր երթալու  
չի գիտնալով ո :

Ահա այն այս մէկ գեղցիկ տողին  
մէջն է , որ ամեն հաւատոյ որդիններուն  
հոգեւոր պատմութիւնը կը կարդամ :  
Այս տողը այնպիսի ամենախորին դաս  
մի , այսինքն Աստուծոյ վրայ այնպիսի

հնաղանդ հաւատք մի կը յայտնէ , որ  
մալութիոյին սրտին համար , ամենէն  
հարկաւոր դասն է : Կարճ մէկ վրձ-  
ուով , հաւատքով քալելը կը նկա-  
րագրէ :

Եւ ի՞նչ է այն , միթէ անհնպատակ  
յանդուգն ձեռնարկութիւն մի է : մի-  
թէ բազդովի թափառում մի . ոչ : այլ  
ձիշդ անոր հակառակը : Աստուծոյ  
Ճամբան երթալն է եւ ոչ թէ անձին  
փափաքած կամ ուղած ճամբան :

Հուատքով քալելը ձիշդ մեր երկ-  
նաւոր Հօրը հետ ձեռք ձեռքի , քայլ  
ընդ քայլ հարթ կամ խորառւքորտ  
տեղերէ , ըլորներու վրայէն կամ վո-  
րէն , վարդիեան տու վայրկեան քայլն  
է , զօրութեամբ կամ ըսելեայն հա-  
ւատալով թէ . “ Բոլոր բարի մարդիկ-  
ներու . քայլերը Տիրումէ կ'առաջնորդ-  
ուին ո : Պէտք եմ Անոր հրամանին հը-  
նաղանդելու : Այսօր , այսօրուան գոր-  
ծը պէտք եմ ընել , այսօրուան մէջ  
ինձ շնորհուած զօրութեամբը կամ  
կարողութեամբը : Այսօրուան բեռը  
պէտք եմ կրելու : Իմ պարտաւորու-  
թեանս կաննը այս օրուան համար է :

“ Իմ օրուանս պէտքին համաձայն պի-  
տի ըլլայ իմ զօրութիւնս ո : Վաղուան  
Ճամբորդութիւնը , վաղուան աշխա-  
տակը և վաղուան փորձութիւնները

Եւ նեղութիւնները մինչեւ վաղուան գալը սկետք եմ թողութ։ Զեռքդ ինչ որ գտնէ ընելու, ընէ թնդ, և վաղուան համար մի հոգար։ Այս հաւատքին առաջին դասն է։

Համարիմք թէ Արբահամ ամբողջ գիշերը արթուն մնալով հետեւեալ օրուան երթալիք ձամբային վրայ սկըսէր հոգալ և մոտասանցիլ, և առաւօտուն չուզէր և մերժէր քայլ մի անգամ առնելու, մինչեւ որ Աստուած իրեն Քանանու երկրին ձամբուն աշխարհագրական տախտակ մի չի տար։ Այս ասեն Տէրը այնպիսի ձանձրալիք բեռէն պիտի տաղսկար և պիտի թուզուր որ Ուռ. (Ուրֆա) վերագառնոյր։

Արբահամ ուր երթալը ըք գիտեր, բոց գիտէ, որ Աստուած գիտէ։ Անիկա երկու բանի համար արս հովէ, առաջնն այն է, որ այն ձամբային, որ Աստուած իրեն կ'առաջնորդէ ուղիղ ձամբան է և երկրորդը թէ այն ձամբան, առահավ ձամբան է։ Ահա այս է ամենը, զորս դուք կամ ես գիտնալու իրեանք յուսալ։

Ապագան անաշխարհագրուած երկիր մի է։ իւրաքանչիւր քայլը բառ առ բառ գէպ ՚ի մութը քայլ մի է։ Ապագայն “Եօթը կնքով կնքուած գիրք մի է և մէկը չէ կարող զայն քակել”։ Այն գրքին մէջի պարունակութիւնները, մի միայն Աստուծոյ կնիքները քակած առենք կը տեսնենք, որ թերթէ թերթ կը դարձնէ, իւրաքանչիւր թերթը իր առենքնին Անձնասիրութիւնը շատ անդամ կ'անձկայ, որ կնքուած էնքրուն նայուածք մի նետէ, սակայն հուատքը կը փափասյ, “Ո՛չ, ո՛չ, Աստուծոյ յուսայ ո”։ Այն ողորմութիւնները և օրհնութիւնները՝ զորս Աստուած մեջի համար պատբաստած է աւելի թիւթիչ և հմայիչ զօրութիւն մի ունին, երբ ակնկալութեամբ աւ-

րուած չեն։ Աստուած չի թողուր, որ իւր ողորմութիւնները տատչեն զեղչ ջելով (սքօնթօ ընել) ընդունիլոք։

Սակայն մեր վրայ գաղիք նեղութիւնները չի նախատեսելնիս, աւելի լաւ է։

Երբ ջերմ սիրով կապուած երիւասարդ զադ մի իրենց հարասնեաց օրը ձեռք ձեռքի կը տան վառվռուն յուսոց տայծառութեան մէջ, անոնց հոգը ջղար երբ ծերագցն գլուխներ գուշակութեամբ կ'որսուին և ծերագոյն լեզուներ կը կարկաչն ըսկելով, “Դուք անուշը առանց դտոնութեան չի պիտի կընաք ընդունիլ”։ Սակայն նորատունեկ զայգը դառնութիւնն ընդունելու միաց չ'ունի։ Խնչու անոնց արեւի պէս պայծառ ուրախութիւնները մմացնեմ ամազ մի ցցց առաջով, թէ և այն ամպը “Մարդուս ձեռքէն մէծ ալ եղած ըըլայ”։

Հիւանդ անկողնին քովը հսկելու համար եւ պարագ խրճիթին վրայ ողբալու՝ գեռ բաւական ատեն կոյ։ Կենաց ձամբորդութեան մէջ այս վշարի տեսարաններուն պիտի մեր ձենան, “Հերիք է օրուան իր նեղութիւնը”։ եւ նմանապէս ուրախութիւնը։ Մեր տիրութիւնները յառաջագոյն կազմելը միայն տագնապ պիտի աւեցնէ, զանոնք կրելու համար առանց զօրութիւններու աւեցնելու։

Կենաց ամենաազեիւ եւ ամենասուրը ձեռնարկութիւններէն քանի քանիներ կրնային երբէք սկիզբ չ'ունենալ, եթէ բոլոր գժուարութիւնները, անյաջաղութիւնները և նեղութիւնները նախատեսուեին Եթէ Պետրոս զնտաներ և խաջը յառաջագոյն տեսնէր, գուցէ իւր ուսկանը այնչափ շուտով ըք պիտի թողուր Քրիստոսի հետեւելու համար։ Եթէ Քրիստոսի ծառայելու նպատակաւ իրը եկեղեց-

Ես պոշտոնեայ համալսարանին կամ ձեւմարանին մէջ ուսանողը իրենց ապագայ պատճենթիւնը յառաջադրոյն կարող ըլլան կարգալու , տարակցու շունիմ որ անմեցմէ շատերը մէկքի պիտի երթան , մէկը իւր կալուածքին , միւսը իւր վաճառքներուն : « Հետեւէ՞ ինձ ո՞կ չէ ծէրը . և ըստ բոլոր խոստումը այս է . « Ահա ես միշտ հետդեմ » : Ասուած Ռելաքֆօրսին<sup>(\*)</sup> չըստու թէ Խորհրդարանին մէջ քսան տարի իւր հակառակորդներէն պիտի յաղթուէր և իւրաքանչիւր քայլին պիտի նոխատուէր մինչեւ որ գերեաց ազատութեան վերջնական յաղթանակը վաստիէր : Քրիստոս իւրաքանչիւր երիտասարդ հաւատացելցն սկիզբէն ըլլայանէր անոր հանդիսելիք բոլոր նեղութիւնները և փորձութիւնները և և կամ ունենալիք անյաջողութիւնները : Քրիստոսի բոլոր մեզի ապահովցուցածը այս է . « Իմ շնորհքս քեզիքաւ ւական է » : « Անոր՝ որ կը յաղթէ , պիտի տամ կենաց պատկը » : Արդեօք ասէք աւելի բան մը պէտք ենք խնդրել :

Դէպ ՚ի երկինք եղած բոլոր ձամբորդութիւնը հաւատքով քայլելովէ : Աստուծոյ մեզմէ բոլոր խնդրածը այս է « Հնազանդէ և յուսա» : Մեր խեզը և կոյր երկչուառթիւնը յաճախ կը տատամօի և կը քրթմնիլէ . « Տէր, ձամբան

(\*) Ռելաքֆօրս Անգլ. Խորհրդարանին անդամ մի կը բարեմարտ : ուղղամբու և բառապետական անձմի : որ առանձին սկսաւ Արեւմուսան Հնդկաստանի (West Indies) շրու միթօն գերիներու ազատութիւնը պահանջէլ, ընդգէմ հասպարակաց կարծեաց : ամեն նախատինք, վիշտ, ցաւ կրկէն քան տարի վերը հասպարակաց և Լորտերու Խորհրդարանի անդամոց հաւատութեամբը չըստ միթօն գերիները իրենց տէրերէն քսան միթօն Անգլ . միթօն ծախուանուեցան Անգլ . կառավարութեան գանձէն : Ահա այսօր այս գերիներէն շատերը կամ անոնց զաւակները իրենց երկրին մէջ Խորհրդարանի նորագահ անդամ և այլն են :

ինձարէս կրնանք զիանալոյ : Մեր առտուածային առաջնորդը կը պատաժանէ . « Ես եմ ձամբան » : « Ինձ հետեւէ ուէ » : « Ես կոյրն իր չգիտացած ձամբայէն պիտի առաջնորդեմ անոնց առջեւ մթութիւնը լոյս պիտի ընեմոյ : Օրհնեալ է այն հոգին , որ յառաջ և հնազանդէլը սրբած է :

Կենաց իրական մրցումը մեր ուղած ձամբան քայլելուն և Աստուծոյ ուղած ձամբան քայլելուն մէջն է : Մեղաւորին մեղքը ճիշդ ասոր մէջն է : Մեղաւորը իրեն էն հաճելի երեւցած ձամբայէն կը քայլէ , որուն ծայրը զըմուխն է . . . . Նոյն խոկ Քրիստոնեայք շատ անգամ սոսկալի իերպիւ կամագաշտ ըլլալու կը փորձուին : Պավուիր ուղած ձամբան ընտրեց . այն ձամբան զինքը Սոդամ առաջնորդեց : Երրոր Աստուծոյ առաջնորդութեանը հետեւեցաւ , Զօար առաջնորդուեցաւ և ապահովաւ : Յովինան իւր ուղած ձամբան ընտրեց և զինքը նաւեն դուրս փոմորկալից ծովը նետել առուաւ , ետքէն Աստուծոյ ձամբուն հետեւեցաւ և սիրոյ առաքելութեամբ մի Նինուէ առաջնորդուեցաւ : Պետրոս զինքը հագալու ջանաց և ստախոս և վատ մի դարձաւ . ետքէն թող տուաւ որ Աստուծոյ զինքը հոգաց և հանդարտութեամբ եւ խաղաղութեամբ բանարը ննջելու երթալով , ազատութեան հըրեշտակէ մը արթնցաւ : Ընթերցող , միշտ չէս մի տեսած , որ աւելի հաւատքով սնած ատենդ ամենաքաղցր խաղաղութիւն մի վայելած ես :

Խորհրդածութիւն մի եւս , « Արահամ երկրիս վայ ուր երթալը չէց գիտեր ո , սակայն գիտէր որ դէպ ՚ի Երկինքը երթալու ձամբուն վրայ եր և « Անիկա հիմնարկութիւն չունեցող քաղաք մի կը վնասուէր ո : Դէպ ՚ի այն Մէծ Թագաւորին փառաւոր մայրաւ

քաղաքը իր բոլոր թափառմանցը մէջ  
իւր աչքերը սեւեռած հասատած  
էր . . .

Այսպէս մենք ալ պէտք ենք յա  
ռաջընկել օրէ օր , պարտաւորութեւ  
նէ ՚ի պարտաւորութիւն . . . սակայն  
քիչ ատենէն և Յաւիտենական փա  
ռաց մեծութեանը ։ Այն բաւական  
է . . . թող փոթորիկները մանցեն , ան  
գին զիմացը երկինքն է : Ի՞նչ հոգ ե-

թէ ձամբան մութէ , երբ միայն կառ  
բենամ Յիառաբին ձեռքը իմ ձեռքիս  
մէջ զգալ և Անոր ըսելը լսեմ , “Ես եմ  
մի երկիչիր , որդեակի իմ , ուր որ ես եմ  
դուն ալ հան պիտի ըլլաս ։”

Այս Աստուածային ձայնը հանա  
գարտութիւն կը բերէ :

“Սիրեցեան իմն է եւ ես Անորն  
եմ ։”

Dr Theodore L. Cuyler

## ԾԱՂԿԱՔԱՂԱՂ ԱՄԵՐԻՔԱԿԱՆ

### ՔՐԻՍՏՈՆ ԱՌ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՆ

“Գնա՛ գործէ՛ իմ այգւցս մէջ” հան ընելիք շատ գործ կայ .  
Հունձքը շատ է , եւ աշխատաւորները քիչ .  
Հան վնասակար խոտեր շտուկան , այդին անպարխապ է , գէշ տունկեր կան խլուելու  
եւ փոխագարձ հերկելու , սերմաննելու և պտուղները քաղելու պէտք կայ =  
Աղուէսներ կան բռնուելիք , գայլեր կան ընջուելիք .  
Ամէն հասակի և աստիճանի տէր մարդկանց գործ ունիմ տալիք ,  
Ոշխարներ ունիմ նայուելիք , եւ գառնուկներ գարմանուելիք .  
Կարսուածը պէտք է վնասուել , հաւքել , վհատեալները միմիթարել :  
Գնա՛ գործէ՛ , գնա՛ գործէ՛ , գնա՛ գործէ՛ իմ այգւցս մէջ շտուքան կայ ընելիք .  
Գնա՛ գործէ՛ , գնա՛ գործէ՛ հունձքը շատ է , և աշխատաւորներն քիչ :  
“Գնա՛ գործէ՛ իմ այգւցս մէջ” զըեղ իբրեւ իմն կը պահանջեմ ,  
Արիւնով քեզ ծախու առի և բոլոր քուկդ եղանները .  
Քու ժամանակդ և քու տաղանդներդ , քու ամենաքարձը կարողութիւններդ .  
Քու ամենաչերմ զգացումներդ և պայծառագոյն ժամերդ .  
Ես յօժարութեամբ թողոցի իմ թագաւորութիւնս քեզ համար  
Խնչպէս նաեւ Հրեշտակապետաց երգերը – որ ծառին վրայ կախուիմ  
Յաւերու եւ փորձութեանց մէջ , վշտոց և ամօթի մէջ ,  
Քու բռն զինդ և արժէքդ լիովին վճարեցի , իմ ծախու առածս կը պահանջեմ :  
Գնա՛ գործէ՛ , գնա՛ գործէ՛ , գնա՛ գործէ՛ իմ այգւցս մէջ շտուքան կայ ընելիք .  
Գնա՛ գործէ՛ , գնա՛ գործէ՛ , հունձքը շատ է և աշխատաւորները քիչ :  
“Գնա՛ գործէ՛ իմ այգւցս մէջ” ո՞հ , գործէ՛ քանի որ ցորեկ է ,  
Արեւին լուսաձանանչ ժամերը կը շտապին շուտաշուտ  
Եւ գիշերացին տիսուր սպուելները ժաղախուելու վրայ են ,

Այն ատեն աշխատելու ատենդ յաւիտեանս պիտի անցնի .

Սկսէ՛ առաւօտուն և վաստակէ՛ օրն բոլոր .

Քեզ զօրութիւն ես պիտի տամ, և վարձքդ ես պիտի վճարեմ .

Եւ օրհնեալ, երեքպատիկ օրհնեալ են, այն քանի մը ժրածան գործաւորները,

Որ իմ իրենց յանձնած և տուած գործս պիտի լինցնեն

Գնամ գործէ՛, գնամ գործէ՛, գնամ գործէ՛ իմ այգւոյս մէջ շատ բան կայ ընելիք,

Գնամ գործէ՛, գնամ գործէ՛, հունձքը շատ է և աշխատաւո՞ներն բիւ :



## ՄԱՆՈՒԿՆ ԵՒ ՔԵՐՈՎԲԷԿՆ

**Գ**իշերացին ըսութիւն զերկիրս ամեն պատած էր ,  
Նուիրական տեսարան երկնից երես կը փայլէր .  
Աստեղներու ազօտ լցոն , կիսալուսնոյ միացած ,  
Մթնոլորտին տիսուր մութն գեռ եւս չէին փարատած :

**Ա**րարածք ամէն ,

Քաղցր ՚ի քուն ննջն :

Հոկէ Արարին ,

Յերկնից խորանէն :

**Ս**ա դիմացի անակին՝ հէտ բնակիչքն հանգշած չեն  
Հիւանդ մանկան մահճին քով՝ արտասուալից կ'աղօթեն ,  
Բարձրեալդ Հայր քուկդ մնք “Եղիցին միշտ օրհնեալ կամքդ ”,  
Չի հայրախնամ տէրութեանդ ծառայենք մնք հնաղանդ :

Ի ծունըր իջան ,

Բայց մանկան վրան

Ոգի մը տեսան

Փայլակի նման :

**Կ**էս գիշերէն ժամ մը վերջ անմեղ մանուկն կը ժպտէր ,  
Վարդանման դէմքին վրայ մահուան դալուկն կը ծածկէր ,  
Տառապեալ մայրն , թշուառ հայրն , սրտից խորէն հառաշեն  
Բայց Բարձրելցն Սուրբ Հրտմանն՝ այն սուրբ Մանուկն կը կանչէր :

**Լ**ոյս ցոլսյր պայծառ

Ճակտէն ձիւնափայլ ,

Աստեղի պէս վառ

Աշերն ունէր փայլ :

“ Յիսուս Փրկիչ , իմ Աստուած , ընկալ զոգիս ” մրմիջէ ,  
“ Գործադութ իմ ծնողը , մնաք բարեաւ . . . ” եւ ննջէ .  
Ամբիծ հոգին վերանայր , Քերովելին զիրկ ընդ խառն  
Ունայնութեան աշխարհէն անմահութեան ’ի կայսն :

Հինդ տարի մնաց  
Ի զիրկ ծնողաց .  
Արդ՝ զանոնիք թողած  
Թռչն առ Աստուած :


Լուսնց քայլէն բաւձրանան եւ տառեղներ բիւրաւոր ,  
Վեհ տեսարան կ'ընծայեն սքանչելի շաբքերով .  
“ Նայէ , կ'ըսէր , հրեշտակն , ինչ է երկրիս տեսարան ,  
Խաւարն միայն իւր բաժին , տես դու երկնից մեծ խորան ” :

Խոկ մանուկն անմեղ ,  
Հրճուելով կ'ըսէր .  
“ Եկուր թռչովնիք ,  
Երկընիք երկինիք ” :

Անհունութեան ասպարէզ եռանդագին կը զիմնն ,  
Հազարաւոր լուսագունդ՝ յետուստ թողած վեր կ'ելն .  
“ Օքնենիք , լսաւ սուրբ սգին , օքնենիք մեր սուրբ Արարիչն ,  
” Ահա Անոր անմահ փառքն երգենք մէկ տեղ ցհծալից ” :

Օքնենիք հասան  
Յ'Անմահին կայսն ,  
Մանուկն Քերովելին  
Ուր դեռ եւս կ'երգեն :

Յօդինեաց  
Յով . Թ . Տամաճեան :



# ՏԱՐԱԳԻԲՈՒՅ

**Ա. ԲԱԲԵՆՅԱՅ ԺԱյռ ԵՐԱԾՄ**  
 Այսօր տեսի՞ տրումագին  
 Օտար Սոխակ երգում էր  
 “Վարդ, բուրաստան ո վշտագին :  
 “Վաթան, վաթան ո մնչելով՝  
 Այս էր քաշում գառնագին,  
 Աղիոզորմ հեծելով՝  
 Հոգւոց հանում լոլոգին :  
**Յաւ Սոխակին Կորեվէր**  
 Սիրոըս խոցեց զլսովին,  
 Հեծեծանիքն վշտագին  
 Կրակ թափեց իմ զըլոին :  
**Կարեկցաբար մերձեցայ**  
 Եւ հարցրի Սոխակին,  
 – Է՞ր հեռացար վաթանից,  
 Ի՞նչու հեծես գառնագին – :  
**– Բուք կատաղի Հիւսիսին**  
 Բռնի մղեց յայս ժայռուտ,  
 Իմ հայրենի սուրբ հողից  
 Տարագրեց յայս քարուտ :  
**Ուր ոչ գետ կայ ոչ աղբիւր,**  
 Այլ ապառաժ, աւաղուտ,  
 Ո՛չ բուրաստան, ոչ այդի,  
 Այլ չոր սարեր քարբարուտ :  
**Անզուգական ընդ երկնիւ**  
 Եւ ցանկալին ողջ ազանց,  
 Հայսաստանն է իմ վաթան,  
 Հայկաց երկիրն դիւցազնոց :  
**Աստուածատունկ Եղեմն է**  
 Իմ բուրաստան գերազանց,  
 Որ ոռոգի քաջառաջ  
 Ջրովք գետոց հայկազնոց :  
**Արծաթափայլ բիւր աղբիւրը,**  
 Հաղարաւոր ջինջ առուտակ  
 Ողողում են իմ վաթան  
 Աշուն, գարուն շարունակ :

Աղինաբցու բիւր ծաղկունք  
Խնչպէս արփի փայլունակ ,  
Անմահական հոսք բռւրեն  
Վարդ , բալասան , մանիւշակ :  
Լոեց Սոխակն եւ թռաւ  
Խոր խոր ձորեր չափելով ,  
Սիրուն սար մի բարձրացաւ ,  
Զիթենեաց մէջ թառելով :  
Աչերն անդէն վեր յառած  
Ի խոր սրտէ հառաչեաց ,  
Վեր սլացաւ զօրացած  
Վաղեց վաթան իւր նախնեաց :  
Արդեւը զգաց ինդէ Սոխակն  
Թէ այս սարն ինչ սար էր ,  
Ինչ զօրութիւն գերբնական ,  
Որ զօրացց իւր թեւեր :  
Այս էր սարըն Զիթենեաց  
Ուր կ'աղօթէր միշտ Յիսուս ,  
Բաղկատարած , մտովին  
Ամեն գիշեր մինչ ՚ի լցու :  
Յերկնից յերկիր ՚ի խոնարհ  
Այս Անսիան , երբ իջաւ ,  
Պաղէստինի ժայռերում  
Իբրեւ պանդուխտ շրջեցաւ :  
Որ համբարձաւն այս սարից  
Իւր օթարան երկնային ,  
Նա զօրացց թոյլ թեւեր  
Թշուառ պանդուխտ Սոխակն :

ՄԱՐԴՈՒՅ,

## ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՈՒՅՑ ՈԳԻՆ

Սոկրատէսից սկսած անդաւգար հրաւեր է կարգացնելում, որ մորգս ինքն իրան ճանաչէ : Բայց նորերս այս հրաւերը անհամաներից ամբողջ ազգերին էլ կարիւօր դարձաւ, երբ ազգայնութեան գիտակցութիւնը քաղաքակրթեալ երկիրներում աւելի և աւելի զօրացաւ : Ընդհանրական ոգին, հրապարակական կարծիքը մի դործիչ է դարձել մեր ժամանակութեան հետ կապուած է, այդ դործիքը պիտի ճանաչէ : Տալէյրանն ասաց մի անդամ. “ Ես ճանաչում եմ մի ոք, որ Վալթերից խելօք, մի ոք որ Բնապարտէից խելօք, մի ոք որ աշխարհքի բուլը եղած եւ լինելու իմաստուններից խելօք է, — դա է հասարակական կարծիքը : ” Բայց այդ կարծիքը հեշտ չէ ճանաչել, մուր է դորա սահմանը ժամանակի մէջ, անձանց մէջ, ո՞ն է դորա բովանդակութիւնը, դորա ուղղութիւնը : Հասկանալի է, որ դա վերին աստիճան երերուն և տատոննող գաղափար է, երբեմն ընդարձակ, երբեմն սուր միաբ ամբոփելով բայց այնու ամենայնիւ մենք պէտք է դորան ճանաչենք, ապա թէ ոչ մեր բոլոր աշխատութիւնները ընկերութեան մէջ անորոշ և ուրեմն ՚ի զուր պիտի լինին : Որչափ որ երերուն և տատանող լինի այդ գաղափարը, դա դարձեալ որոշակի կերպով երեւումէ մի ազգի բընտարութեան մէջ, մի որոշեալ ժամանակուայ մէջ : Այս, մի կողմից քաղաքակրթութիւնը այնպէս հաւասարաշափ և արագ տարածւումէ ազգաց մէջ, որ կարես թէ բոլոր զանազանութիւնները իրարու մէջ պիտի վերանային, բայց դարձեալ դուցէ ոչ մի ժամանակ ողին այնչափ զանազան չի

Ժ.

եզել զանազան ազգաց մէջ, ինչպէս այսօր : Իւրաքանչիւր ազգ իւր առանձնութիւն, իւր գաղափարական (իգէալ), իւր նպատակ, իւր յատուկ կեանք ունի : Եւ այդ կեանքը վերին աստիճան շարժուն է : Մի տարուաց մուտքից սկսած մինչեւ ելքը մի ազգի մէջ որքան շարժում է ոգին, գրգռումէ սիրտը, լարւումէ կամքը, քանի մոքեր, խորհուրդներ, գրայմանցներ, որքան կարօտութիւն, հոգս, խնամք, քանի զանազան ձգտումներ մարգս զբաղեցնում են : Բայց դարձեալ այսքան խառնուածքի մէջ մի կանոնաւոր կեանք, կանոնաւոր կերպարանք երեւումէ, որը որ ազգի ընդհանրական ոգի անուանում ենք : Միշտ և ամենայն ազգերի մէջ որոշեալ պիտի պաշտպանող գաղափարները ընդհանրական կեանքի մէջ ցանցի պէս որպիսուում, տարածւում են : Այսպէս է մի ազգի մէջ իր քաղաքական կազմը ևածքը, իր օրէնքները, իր հիմնարկութիւնները . իւրաքանչիւր մարդ այդ գաղափարով մննդուած՝ իր դորձքերի մէջ էլ երեւցնումէ ժամանակուայ այդ յատկութիւնը : Այսպիսի ժամանակները ծնում են բանաստեղծներ, փիլիսոփայններ, օրոնք միայն ոյն են մասածում, ինչ որ նոքա իւրեանց ազգի հետ ՚ի միասին մասածէլ կարող են, օրոնք ընդհանրական ոգւոյ ճշմարիտ ներկայացուցիչնեն հանդիսանում, բայց ՚ի հարկէ ոգին աւելի մեկին և աւելի պարզ ներկայացնելով : Քան թէ ամբոխ գիտակցութեան մէջ յայտնուումէ :

Թէ ես մեր ազգի ընդհանրական ոգին ներկայացնելու պիտի գնուարանամ, հասկանալի է նախ այն պատճառաւ, որ ոչ մեր պիտի պաշտպանող գաղափարները պարզ յայտնի են, ոչ էլ բուն ազգային բանհաստեղծներ կամ փիլիսոփաներ ունենք, օրոնց լապտերի լու-

24

սով գեթ կարողանայինք այս դժուար ճանապարհը մտնել, և երկրորդ խընդիրը աւելի կնճռուտ է, քան թէ հարթեւտնցի երեւալ կարող է, եթէ ուշադրութիւն դտրձնենք դորա բազադրութեան վրայ, ինչպէս հետեւեալ օրինակիները պիտի ցցց տան :

Մի ազգի հոգին համեանալու համար գուցէ նախ և առաջ պէտք է իւմանալ, թէ նա այս ինչ ժամանակում ինչ գողակարակն է կազմել մարդկացին կատարելութեանց մասին : Մարդու վրայ ունեցած գաղափարականը ուրիշ էր Հոմերոսի ժամանակ, ուրիշ էր Ստցիկեանի գաղափարականն, ուրիշ էր Հռոմէացունը, ուրիշ էր միջնադարեան ասպետինը, մէկ խօսքով ամենայն ժամանակ ուրիշ կրթութիւն, ուրիշ հոգի է ունեցել : Այդպէս պէտք է ցցց տացինք և մեր ազգի այժմեան գաղափարականը, Այժմեանը – բայց գուցէ մենք ոչ թէ մէկ, այլ շատ տեսակներ ունենք՝ մեր բազմակոր կեանքի համաձայն, որ կարծես թէ երբէք և ոչ մի տեղ կատարելութեամբ զարդանալու բախդը չէ գրտնում, բայց այդ էլ հետաքրքիր յատկանիշ կը լինէր մեր ազգի համար, թէ գարձեալ անհանգիստ ձգտում է մը թութեան մէջ, բայց իր խաղաղութիւնը գեռ չէ գտել :

Ուրիշ տեսակ խնդիրներ կառաջանան, եթէ մտածենք թէ զանազան ժամանակներին՝ մարդկացին ոգու զանազան գործովութիւնքը աւելի աշխատ թութիւն են ունեցել. մի ժամանակ մարդիկ աւելի զգացմանց ենթակայ են եղել, միւս անդամ աւելի երեւակայութեան փոթորկի մէջ են եղել, կամ թէ չէ երբեմն կամքի արթնութիւն, դործունելութիւն, եռանդ են ցցց տուել, իսկ երբեմն սառնութեամբ խորհրդածութիւնք են արել

աշխարհքիս վախճանական խնդիրների մասին, և վերջապէս երրեմն էլ որսնել են հաստատ և պարզ ժամանակ լու եղանակը . և այսպէս ամենայն ժամանակ առանձին կերպարանք է ստուցել :

Մինչեւ անդամ խնդիրը աւելի կորելի է մտածաւորել և ցցց տալ, թէ ոչ միայն հոգեկան պէտքէս գործովութիւնք, այլ և նոյն խսկ գործովութեանց կերպն ու եղանակը զանազան ազգաց մէջ զանազան ժամանակներում, զանազան են եղել : Զոր օր, քանի որ մարդկութիւնը զարգացել է, այնքան ազգաց մէջ մտածելու տրագութիւնը, ներքին կենաց արագութիւնը փօխուելէ : Առաջ աւելի գանդաղ, այժմ աւելի ձեւապվ է կատարելում: Մեր գրաբարը աւելի հարուստ և ձոխ ձեւեր ունի, բայց աւելի լոյն և ընդարձակ է շարժելում՝ իր մորերը յայտնելու մէջ, քան թէ աշխարհաբարը, որ աւելի պարզ ձեւեր ունի, բայց և աւելի ընդունակ է խիտ մըտքեր բովանդակել իր պարզութեան մէջ: Եւրոպական լեզուները այդ կողմանէ մեզանից շատ հեռու են գնացել և այդ է պատճառը, որ ով որ այդ զանազանութեան վրայ ուշը չէ դարձնում, թէ գրելու մէջ և թէ խօսելու մէջ ակամաց բռնաբարում է մեր կուսական լեզուն, և անհասկանակի է դառնում բուն հայկական ականջ ունեցողին, ոյս ախար ընդհանուր է մեր կրթուած սերնդին: Հայն գանդաղ է մտածում, քան Եւրոպացին, որովհետեւ նորա կեանքը այնպէս բազմակողմանի և արագաշարժ չէ, այնքան կարօտութիւններ չունի, ինչքան որ արեւմուտքում նկատելի է: Զոր օրի Եւրոպացին ամենայն առաւաօտ իր լուրացիրներով աւելի քաղաքական լուրեր, ամերով երկրի ազգերի վիճակի

մասին՝ աւելի տեղեկութիւններ է ընդունվում, քան թէ Հայն մի շաբաթուայ կամ գուցէ մի ամսուաց մէջ ընդունել կարող է. շատ անդամ Եւրոպացին նյուով շրաւականանալով՝ երեկոյան թերթեր էլ է ստանում, որովհետեւ նորա մտածելու պահանջը այդքան մեծ է:

Կարձ, մենք աեսնում ենք, որ մի ազգի ընդհանրական ոգին, հրապարակական կարծիքը, տիրապետող գաղափարը լիբրունելու համար՝ որչափ մշտկուած նիւթեր պիտի ունենանք, որչափ դիտազութիւններ պիտի անենք, որ լիակատար հասկացողութիւն ստանանք: Մեր ազգի ընդհանրական ոգին հասկանալու համար եւս գեռ շատ պիտի աշխատենք, որ կարողանանք պիտանի տեղեկութիւններ ձեռք բերել: Ուստի այդ ընդարձակ հարցը ես անշուշտ պիտի մասնաւորեմ, և այն էլ միայն մեր կրթութեան վերաբերութեամբ: — Այս նկատմամբ տարակցածիայ, որ մեր նահապետական կեանքի սրատերը բացուել էն արեւմտեան քառաբակրթութիւնը ընդունելու համար: Արդեօք այս այնպիսի եղանակով կատարւումէ, որ մեր ազգը պիտի ճնիւանայ, թէ այնպիսի եղանակով, որ իսպառ պիտի լուծուի: արդեօք արեւմտեան ոգին այն արեգանին է, որ իւր կտրուկ և ծակող ճառագայթները մեր աչքերը պիտի կուրացնեն: միժնացնեն, թէ իւր մեզմ ջերմութեամբ և պոյժ ծառ լուսով մեզ նոր կեանք պիտի վայելէ: այս մի մտածելու հարց է: Խրողութիւնն այս է, որ մեր նոր սերունդը, այն մինչեւ անդամ մեր հին սերընդի պաշտպանութեամբ և օժանդակութեամբ, եռանդով դիմում է այդ քաղաքակրթութեան, և ուղիղու կողմնակի ճանապարհներով ու եղանակներով նորա բարիքը մեր մէջ

տարածում է: Արդ չի կարելի արդեօք մի քանի կէտեր գտնել, որոնք գերազանցապէս այդ շարժման մէջ դործալ են հանդիսանում, որոնք ուշադիր կամ անուղղակի մեր կեանքի մէջ մուտք գտնելու վերաց են, եւ որոնք ուրեմն մեր ապագայ ընդհանրական ոգու վրայ գուցէ ազգեցութիւն պիտի ունենան: Անտարակցոյ կարելի է դանել:

Նախ և առաջ ընդհանուր խուզարկութեանց մէջ երեւում է ձրդտում՝ տիեզերքի մէքենայութիւնը գտնել, այսինքն տիեզերքի վրայ մի սյնպիտի ծանօթութիւն ունենալը ուր նախ իւ առաջ ամենայն բանի պատճառը և հետեւանքը յայսնի դառնայ, և ապա այն օրէնքները, որոնցմավ որ բոլոր երեւոյթները կառավարւում են: Այդ պատճառաւ բնական գիտութիւնը իր ամենայն ճիւղաւորութիւններով՝ մարդուս մտածմանց նախապատիւ առարկայ է: Այնպէս հզօր է գորա ազգեցութիւնը, որ եթէ որ և իցէ խնդիր մի ուրիշ գիտութեան մէջ անհերքելի ճշնարութիւն ուղենայ գտանալ, պէտք է բնագիտութեան ընթացքը բռնէ և պահպանէ:

Բնական գիտութեանց զօրութիւնը, գրաւիշ յատկութիւնը, խորին ազգեցութիւնը, ուրիշ տեսակ խուզարկութեանց վրայ թագուհւցն պէտի հանդիսանալը՝ իր տեսակ տեսակ յատկութիւններով բացարուում է: Նախ որ նա օրէցօք հաստատ քայլեր անելով՝ շարունակաբար և անշատար աճում, զարգանում է: Անտարակցոյ այս մէծ առաւելութիւն է, որ համեմատելով ուրիշ ամենայն տեսակ գիտնական խուզարկութեանց հետ՝ միայն բնագիտութիւնը ցցոյ է տալիս այդ անհերքելի յատկութիւնը, սյսմերն ուրամը շարունակ և հաստարակութիւնը:

Երկրորդ՝ ամենայն գիտութիւն, որ փորձով է ձանացում՝ ճիշդ է, նա սրոշ և անհերքելի է մանաւանդ, եւ թէ մի.քանի բնախուժերը նոյնը հաստատում են : Բայց ՚ի հարկէ բնագիտութեան այս գերազանցութիւնը մեզ այնչափ մոլորեցնում է, որ մենք հետդիետէ չափազանցութեամբ սկսել ենք ճիշտ գիտութեանց յարգը ՚ի վեաս միւս գիտութեանց առաւելացնել, Որով իսպառ Ճեցում է մարդկային ուգու ձգտողութիւնը՝ ձանացել և այն իրազաթիւնը, որը որ ճիշդ խուզարեկամեջ ճանապարհով և անմիջնորդապէս իմանալ անկարելի է : Եւ այդպէս մարդկային գաղափարական շահերը և առ հասարակ գաղափարական գիտութիւնը վեաւում է, եթէ բանի նարանից պահանջում է այն, ինչ որ նա իր բնութեամբ աալ չի կարող:

Բնագիտութիւնները գարձեալ գերազանց են նորանով, որ նոքա մի միաւեսակ արդէն երկու գար միշտ և միշտ հասաւաւող և կատարելագործուղ խուզարիսթեան ձեին (մեթօդին) հետեւում են : Չենք կումենում ասել իբր թէ այս տեղ նորանոր գիւտեր չեն եղած, չենք կամենում ասել թէ այս տեղ հանձարներ չեն հանգիտացել որ նորանոր ձանապարհները բաց անեն . բայց թէ բնագիտութեան մէջ մեծ և փոքր հանձարները մի ընթացքով են գնացել, այնպէս որ փոքր հանձարների գործունէութիւնը ևս անհերքելի արդասիք են բերել և մասնակցել են գիտութեան յառաջադիմութեան մէջ, մինչև որ սոքա ևս զգացել են իրանց անհերքելի ոյժը, և հասկանալի է ուրեմն, որ նոր թարմ ոյժեր պիտի գլրաւէին և իրանց հոսանքի մէջ բերեին:

Այս գիտութիւնների մի երեւելի յաակութիւնը ևս այն է, որ գործնական գիտութիւններ են : Գուցէ ամէն

մէկ քայլը, որ այդ շրջանում կատարւում է, այսինքն ամեն մէկ գիւտը ցանցի պէս տարածւում է կեանքի մէջ եւ նրան փոփոխութեան է են թարկում, — այս մի գերազանցութիւն է, որի բարձր արժէքը զժուար թէ հեշտ լինի որոշել : Հին ժամանակներում գանդատառում էին, թէ գիտութեանց ծաղկելովը, ազգութեանց զօրութիւնքը թուլացան, անապրակյաս ապագայիս համար ուրիշ յցսեր պիտի ունենանք : Այսօր գիտութիւններից մենք սպասում ենք, որ գործնական գոլով՝ ունին ընդունակութիւն ազգային կեանքը իրաք և սրդեամբ ճռանցնել:

Ասկայն այս տեղ էլ մի ակնթարթ պէտք է գտնարինք և հանդիսա հոգւալ մասհենք, թէ մեր ժամանակուայ գիտութեանց այս յատկանիցը դարձեալ աննկատելի կերպավ որչափ մեղանել կարող է, եթէ հիմքը ընդունելուց յետոյ հետեւանքի վրայ հոգա չքաշնք : Այժմ ամենքը պահանջում են, որ գիտութիւնը ամենայն տեղ եւ իր ամենայն մասերում նոյն եղանակով գործնական լինի : Մեր ժամանակին համարեա ուշադրութիւն չեն գարձենում նորա վրայ, ինչ որ բանաստեղծը ասում, միկանովան քննում է : Ի հարկէ գիտութիւնը չի կարող նոյն կերպով գործնական դառնալ, նա չի կարող փութապէս և օրէցօր գործադրուիլ այսպէս մասածողները մոռանում են, որ մի գիտութեան արժէքը ուրիշ գիտութեան չափով չափում են : Պաքա սխալ գնահատում են գաղափարական գիտութիւնները, մինչեւ անգամ անարգում են, որովհետեւ նոյանից վերստին պահանջում են այն, ինչ որ նոքա անկարսղ են տալ :

Այս բալոր կատարելութիւնքը ունէ իրնագիտիտութիւնը, այժմեան կեան-

քը ցաց է տալիս, թէ բնագիտութիւնը համնում է իր այդ կատարելութեանց, և գլաւաւորապէս այն պատճառով, որ այդ շրջանի մէջ կարելի է մի այդ տեսակ կատարելութիւնը : Բայց ինչ միջացով է համնում այդ կատարելութեան, աշխատանքի բաժանմանը բարեւով : Աշխատանքի բաժանմունք, այս այն սկզբունքն է, որոյ զարմանալի նշանակութիւնը Պղատոնն անգամ ըմբռնել էր : Մասանանք առ այժմ, թէ ստեղծողականութեամբ առաջ եկած հեղինակութիւնքը, այսինքն բարձր արուեստներից ծնած արդիւնքը, աշխատութեան բաժանումը խսպառ մերժում էն, իսկ ընդհակառակն ամենայն մերենական գործ՝ այդպիսի բաժանման կարությունը ունի :

Աշխատանքի բաժանմունք, դա է մայր ամենայն կատարելութեանց մարդու ձեռքից դուրս եկած գործոց մէջ, բայց մի և նոյն ժամանակ դա է ամենամեծ վրանգ մարդկային աշխատանքի մէջ, եթէ չենք կամենալ, որ նորա մէջ մասնակցող անձը, այսինքն անձնաւութութիւնը չնջուի, անհետանայ : Աշխատանքի բաժանմունքով յաղթութիւն է ստանում գործը, բայց յաղթում է առարկան, բայց անձնաւորութիւնը մաշւում է, եթէ միւս կողմից մի հաւասար օժանդակութիւն կամ մի հնար, օժանդակութիւն չգտնենք ընդդիմագրելու համար :

Ո՞րն է այն օժանդակութիւնն, որ կարողանանք գործ դնել հետղիետէ տարածւող աշխատանքի բաժանման սկզբունքի այդպիսի միակողմանութեան դէմ:

Կեանքիս ամենայն կազմութեանց մէջ ուր բաժանում կայ հետն էլ պէտք է լինի ծովածուն, և սա է այն ակնարկած օժանդակութիւնը :

Մի հայացք ձգենք դարձեալ դիտութիւնների վրայ : Միմէ կարօտութիւն չէ և յայտ ցպիտի դնենք, որ այն պիսի անձնիք անպակաս լինին, որոնք զանազան, բաժանման բաժանման եղած, մասնաւոր խուզարկութիւնները, յիշուցան նկատած փաստերը վերստին կարող լինին բոլորը մի ընդհանուր գաղափարով ամփոփել, որ այնպիսի անձնիք անպակաս լինին, որոնք մի և նոյն ժամանակ մարդկայնութեան ամբողջութիւններ նիւթ չինեն իւրեանց հանձնարարամիտ աշխատութեանց համար : Եթէ լոկ միայն բնական գիտութեան մէջ մնան սմանիք և այդ սահմանից ըլդուրս գան, այդ տեղ էլ դարձեալ ժողովումն սիրող ոգին կարող կը լինէք մարդիկը փրկել իրանց թերակատարութիւնից, բարձրացնել և վսեմացրնել այն գործքերով և տեղեկութիւններով, որ բնական գիտութիւնը այժմ առատութեամբ սպարգեւում է : Ոչ միայն աւելի ճիշդ, ոչ միայն աւելի որոշ, այլ և աւելի վսեմ կ'երեւար այդ ճանապարհով ստացած մեր գաղափարը բնութեան վրայ :

Ժողովումն է մեր առաջն կարօտութիւնը և լրացումն – մեր երկրորդը : Լրացումն այն մաքուլ, որ այսուհետեւ ոչ միայն մարմնական եւ նիւթական բնութիւնը լինի խուզարկութեան առարկայ, այլ և հսկեկան բնութիւնը : Եթէ այս երկու առարկաները միապատիւ իշխանութիւնը ստանան, եթէ մեր միաբը հոգեւիան կենաց հանգամանքների համար ևս նոյն տօկունութեամբ և աշխատութեամբ ուղղուի, ինչպէս որ արտարին՝ բնութեան համար մաքառում է, այն ժամանակ ոչինչ վնաս չի կարող յառաջանալ գիտութեան զբաղմանը բնունքներից, ինչպէս որ միակողմանի հոսանքը ամմ սկսած առաւում է : Ընդ-

Հակոռակ այն ժամանակ կը ճանաչէ-  
մոք կեանքի մէջ ուրիշանհերթելի հան-  
գամանքներ, մենք չէինք կասկոծիլ թէ  
արդարեւ կան գաղափարականներ, որ  
մեր կեանքի մէջ որպատաւոր ենք իրա-  
գործել: Երբ գաղափարական կենաց  
հանգամանքները գտնուին, յօյտնիլի-  
նին, իրաւունք ստանան և ճանաչուին,  
այն ժամանակ բնաւ էլ երկիւղ չի լինիր  
իրեւ թէ մի ազգի կեանքի մէջ գա-  
ղափարական շարժառիթ զօրութիւն-  
ները կը պակասին, որ այժմ գժբախ-  
տաբար կարծես թէ թուլանալու վը-  
րայ են: Մենք պէտք է սովորենք մեր  
մէջ խորասուզուել՝ հոգեկան կեանքը  
հետախուզելու համար, հոգւ յ ըս-  
տեղծողութեան աղբիւները գտնե-  
լու համար, երբ այս աղբիւները գրտ-  
նենք՝ միայն այն ժամանակ կ'ունե-  
նանք և այն մթերքը, որ տեղերից որ  
ստեղծողական ոգին բղնումէ: Գու-  
ցէ իմ ընթերցովներից մէկը կամ միւ-  
սը երբեմն եւ իցէ լսել է երաժիշտ  
Բախի կրօնական նուագերգութիւնը  
(H—moll—Messe): Որի՞ սիրտը այս  
ընտիր արուեստական գործի զօրեղ  
տպաւորութեան տակ՝ սաստիկ կեր-  
պով չի շարժուել: Բայց շատ հասկա-  
նալի է, որ ամենակատարեալ քիմիական  
վերլուծութիւնը զանազան մարմննե-  
րի, ամենակատարեալ գիտութիւնը  
ֆիզիօլոգիական գործողութեանց, ա-  
մենահարուստ ժողովածուները բու-  
սաբանական և կենդանաբանական գի-  
տութեանց, այս բոլորը, ասում եմ, չէ-  
լին կարող այն հոգեկան հողը պատ-  
րաստել և կազմել, որից մի այդպիսի  
աղնիւ արուեստական գործ կարողա-  
նար ծէլ: Դա ծագումէ ուրիշ աշ-  
բիւներից, դա ծագումէ այն զօրու-  
թիւններից, որոնք ուրիշ շարժմունք-  
ների արձագանք են, մէկ իսօրով աղ-  
գային կեանքի այն գաղափարական

զօրութիւնից, որ մէնք կրօն անունով  
հասկանում ենք:

Կրօն, ՚ի հարկե ոչ սպանող բա-  
ռացի մորով, այլ կենդանացնով հո-  
գեբուղիս մորով:

Բայց ափասո, որ այս տեղ էլ աշ-  
խատանքի բաժանումը խիստ խարն է  
հեռացել և մեծամեծ վնասներ է պատ-  
ճառում: Ով որ բուսաբանութեան և  
հանքաբանութեան 16 և 17 դ գարե-  
րու պատմութիւնը աչքի տակն անց-  
նէ, նա կը գտնէ այդ գիտութեանց  
համար արդեամբ աշխատող անուանց  
մէջ շատ հոգեւորականներ, քարո-  
զիներ պաշտօնի և յարգի մէջ, որ այ-  
ժմ, սակաւ է երեւում: Աշառու-  
թիւն կը լինէր, եթէ կարծէինք, իրը  
թէ բնական գիտութիւնը լինքն ըստ  
ինքեան մեղաւոր է, որ գաղափարա-  
կանութիւնը պակասում է մեր օրուայ  
մէջ, ընդհակառակն ովոր ոչ միայն կը-  
րօնագիտութիւն ունի, այլ գիտէ նայն  
պէս կրօնի ծագման պատմութիւնը,  
նորա ներքին զարգացման պատմու-  
թիւնը, նա կը լիշէ, թէ ինչպէս այն  
զարմանալի Յօրայ Գրքի մէջ, ուր ա-  
մենազմուար և ամենախորին բարոյա-  
կան խնդիրները կշռում են, վերջին  
երեսներում լուծւում են բնութեան  
սբանչագործ երեւոյթների միջնորդու-  
թեամբ: Այսպէս ևս միայն նա ձը-  
մարտիւ ոգեւորած է կրօնով, ով որ  
մի և նոյն ժամանակ հասկանումէ բը-  
նութեան հրաշալիքը:

Եթէ բնական գիտութեանց հետ  
՚ի միասին այն կէտի վրայ ամբառնանք  
ուր ամբողջութիւնը ժողովլում է, որ  
տեղից բնութեան վերայ աւելի բարձր  
գաղափար ենք ստանում, որ աեղից  
հասկանում ենք ամենայն ուրեք գոր-  
ծող, ամենայն ուրեք իշխող օրէնքնե-  
րի ներդաշնակութիւնը, զօրութիւն-  
ների յաւիտենական փոփոխութիւնը

և ընթացքը, — այդ հանգամանքը, առաջ եմ, մ' կ'օժանդակիր, որ աւելի բարձր գաղտփոր ստանայինք և այն բանի վրայ, որ գեր ՚ի վեր է քան ըր նութիւնը, բարձր գաղտփար — ամենայն վերջին պատճառների վրայ : Մարդկացին ոգւոյ տպագայի համար մեր յօցը անգախաս պիտի լինի, թէ սյանիսինոր արգայիշներ մեղկը պտորգեւէ հետղհետէ, որ կը կարողանան հաւասարապէս իշխել կեանքի թէ գաղտփական և թէ իրական ձեւերի վրայ :

Այրուը առանձին տեսակ մկանունք է, միանգամայն տարբեր գողով մեր մորմինի ուրիշ անդամներից, որոնք մերթ հանգստութեան մէջ են, սիրուր պէտք է անդադար գործողութեան մէջ լինի : Կ'անքի առաջն բոպէից ըստ կըստծ մինչեւ ՚ի վերջինը պէտք է բաղիսէ, եթէ գագարեց բազմել, պիտի վերջանայ ուրեմն կեանքն էլ : Կրօնը սիրութէ ազգային հոգւոյ կազմութեան մէջ, Եթէ այս սիրութէլ չէ բավսում, այս տեղէլ կոկուի փոտութիւն, ապականութիւն, գարշահոտութիւն :

Մեր հին առաքելական եկեղեցին պարգեւելէ մեղ ոչ միայն հաւատոյ խոր արմատը, այլ և հաւատոյ ազատութիւնը, որ տեղից լցու և ջերմութիւն հաւասար զօրութեամբ ցոլանում էն : Յոյս ունենանք, որ մեր երիտասարդութիւնը նոյն ոգւով մեր գաղափարական կենաց լապտերը անկորուստ կը պահպանէ :

Մարդկացին գաղափարները այն զորմանալի յատկութիւնն ունին, որ իւրաքանչիւրը, երբ միւսների հետ զուգորդուած է, զօրութիւն և կեանք է ստանուած : Եթէ գաղափարների մէջ աշխատանքի բաժանմունք է երեւում, եւ մի և նոյն ժամանակ ընդհանրական ոգու մէջ բնաւ ժողովումն չէ

նշմարւ ում, խոկոյն սկսում է ազգային սդին սառչել, քարանալ : Թող ուրեմն աւելորդ ըստ համարուի այն հրաւելքը, որ զանազան գաղափի սրները, որոնք ազգային ոգու վրայ իշխում են, միաբանին և փոխագարձ օժանդակութիւն ստանան : Եւ նախ և առաջ հարկաւոր է, որ ազգային ոգւոյ ինքնաճանաւառները աւելի և աւելի հաստառի սիրած միայն ձգտական միայն այս միայն ձգտական միայն իր բազմութեամբ ձոխանայ, ոչ միայն ձրդատէ, որ կեանքը զարդարէ, այլ և իր բազմութեամբ գործողութեանց համար գաղափարականներ եւս ճանաչէ, իր կենաց նպատակները և իր ներքին զօրութիւնները եւս ճանաչէ, որով միայն ընդունակ կը գառնայ իր ընդհանրական կեանքին վսեմ և վայելու չ կերպարանք տալ :

Մեր ժամանակուոյ գիտութեան յատկանիը մանաւանդ այն մասն է, որ աշխատում է ազգային կեանքը հետախուզելու եւ որը ձգտում է նոյն պէս իրական, գործնական լինիլ, ձիւդե և հաստատ տեղեկութիւններ հաղորդել, այսինքն վեճակարութիւնը և աղջային գնդեսութիւնը : Դոքա աշխատում են չէ թէ առաջուայ պէս ընդհանրական կեանքի մասին անձեւ ենթադրութիւններով խօսել, հապա որոշ, թուանշանների վրայ հիմնուած փառաերով : Մեծ է դոցա ձգտողութիւնը և անդին է դոցա աշխատութիւնը, որով մէնք հետղհետէ ձիւտ տեղեկութիւն ենք ստանում ազգային կեանքի վերայ : Այդ գիտութիւնները հետզհետէ կատարելագործուելով մեծ ապագայ պիտի ունենան :

Բայց այս տեղէլ կրկնուում է նոյն երեւոյթը : Այս տեղէլ կը կարօսութիւն կայ ոչ միայն ժողովման, այլ և նախ եւ առաջ լրացման, — լրացման այն կողմանէ որ նոյն չափով խուզար-

կույն հոգեկան զօրութիւնները եւս ,  
որ բարոյական ուժերը և ծանօթու-  
թեսն առարկայ դառնան :

Մի օրինակավ այս ասածը բացատ-  
րենք : Վիճակագրութիւնը ու աղքա-  
յին տնտեսութիւնը կենդանի մարդ-  
կանց մէջ զանազանաւում են արգա-  
սարեր հասակը անարդասաւոր հասա-  
կից : Մարդու բնշպէս ասում են , մօտա-  
ւորապէս 13 կամ 14 տարեկանից սկը-  
սած մինչեւի 55 կամ 60 տարեկան հա-  
սակը արգասարեր է : Այս է այն ժա-  
մանակը , երբ նա աշխատել կարող է :  
Մանկութեան ժամանակ մարդու լոկ  
միայն վատնող էակ է , նշնապէս և ծե-  
րութեան ժամանակ : Այս է վիճա-  
կագրութեան և աղքային տնտեսու-  
թեան կարծիքը , որ 'ի հարկէ շատ կող-  
մանէ թանկագին է մեզ . բայց այս  
կարծիքը մեծ պակասութիւն է ցոյց  
տալիս՝ մարդու լոկ միայն մի նիւթական  
էակ ձանաշելով , եթէ մենք հոգեկան  
բարոյական զօրութեանց վերայ եւս  
ուշը գարձնենք , մենք կը համոզուինք  
որ զանազանութիւնը ամեննեւին այն  
պէս նեղ չէ , ինչպէս որ ենթադրուում  
է : Երեւակայեցէք ձեզ մի մանուկ , մի  
ծիծ ուտող մանուկ մայրական կուրծ-  
քի վրայ . աղքային տնտեսու աչբով  
դա լոկ միայն վատնող էակ է . դա լո-  
փաւմ ուտում է մօր զօրութիւնը եւ  
մինչեւ անդամ գուցէ աւելի ուտում ,  
քան թէ մայրը կը կարողանայ վերս-  
տին փոխանակել , դա ուտում է , բայց  
տնտեսականապէս ոչնչչէ արտագը-  
րում : Իսկ բարոյական կողմանէ ուժեղ  
արգասարեր զօրութիւն է դա . ծըծ-  
կերը իր աչքը բաց ու խուփ է անում  
և ուրախ ժայխուվ մօր վրայ նայում է .  
որչափ քաղցր է , որչափ մաքուր եւ  
վեճմ է այն բաւականութիւնը , որով  
մայրական սիրտը լոկ միայն զգալով  
ըրում է : Մինչեւ անդամ որպիսի

ֆիզիքական զօրութիւնն է զարթնում  
մօր մէջ լոկ միայն այն ուրախական  
զգացումից , որ նորա և մանկան փո-  
խադարձ սէրից բզիսում է :

( Նորունակելք : )

Սէրբու Մանելինեան :



### ԺԱՄԱԿԱԿԱՐԱԿԱՆԻՔ

Գողերան , որ բաւականին սարսափ  
եւ տագնապ տարածած էր Ասորես-  
տանի մէջ , Դամուսկոսէն եւ Պէրու-  
թէն խապու անհետացած է :

— Յունաց նորընարի Պատրիարքն  
ձեռնարկած է վանական ներքին բա-  
րեկարգութեան : Երիտասարդ միա-  
բանութիւնն ձայնակից եւ աջակից է  
իրեն , բայց ծերունեաց կողմէն բա-  
ւականին գիմադրութիւններ կան :  
Կը լուսի թէ մօտ ժամանակներս ՚ի  
Պօլիս պիտի ուղեւորի եւ իւր պատ-  
րիարքական իրաւասութիւնն ընդար-  
ձակելու համար պիտի աշխատի . վասն  
զի Կիրիլոսէն զինի Յունական Միա-  
բանութիւնն բաւական սահմանափա-  
կած է Պատրիարքի իշխանութիւնն ,  
այնպէս որ առանց Անոօդի հաւանու-  
թեան ինքնին գործելու ամեննեւին  
արտօնութիւն չըւնի :

Քաղաքացիք մեծ համակրութիւն  
ցոյց կը տան Նորընարի Պատրիարքին ,  
բայց կը պահանջնեն , որ յատուկ ա-  
ռաջնորդ ունենան քաղաքիս մէջ , և  
ամեն ժամանակ սոխուած ըլ լինին  
Վանուց Կառավարութեան զիմելու :  
Թէեւ դժուարին է այն պահանջն ,  
բայց գուցէ թէ հասնին քաղաքա-  
ցիք իրենց նպատակնեն Ուուսաց Հիւ-  
պատոսարանի աղքեցութեան նորհիւ :



	ԴՐԱ	ԳՐԱ
Հեղերէն խոշորագիր. Տպեալ 1869.		30
Հենրիկոս եւ Մարիամ. Տպեալ 1870.	2	20
Հայհամադ սիրոյ, դործ Մարեզեան Յավսէփ վարժապետի. Տպ. 1870.	2	
Պերուբնա Եղեսացի, եւ Եսայի կաթոլիկոս Աշուանից. Տպեալ 1868.	3	
Ճաջոց Գիրք. Տպեալ 1873.	300	
Ռառ հաղորդութեան. Տպեալ 1860.	4	
Ռառ դպրոցական. Երկու փոքր տեսքակիներ. Տպեալ 1863 եւ միւսը՝ 1867.		30
Ռարասանութիւն առ ձեռն. աշխատասիրեաց Եղիազար Մուրասեան.	3	
Մասնագլութիւն նախնաց. Տպեալ 1856.	6	
Մասթէոս Ուռհայեցի. դործ նախնաց ԺԲ դարու. Տպեալ 1869.	14	
Մեկնութիւն Եղեսացւոց. Տպեալ 1850.	25	
Մեկնութիւն յայտնութեան. Արդարական ամբողջացւոյ. Տպեալ 1855.	10	
Միայնի Աստրոյ ժամանակաբառութիւն. դործ ԺԲ դար. Տպեալ 1871.	16	
—Նոյնը՝ ուրիշ գրչականվ բաշխատուած փոքր ինչ տաղըներութեամբ.	12	
Յովհաննէս կաթողիկոս, պատհութիւն Հայոց. դործ նախնաց Թ. դարու.	10	
Յավսէփ գեղեցիկ. Տպեալ 1849.	10	
Կարեկ. աղօթանացոյ Ա. Հոն մերոյ գրիգորի Կարեկացւոյ. Տպ. 1868.	12	
Կոր բնիթերցարան. Տպեալ 1868.	5	
Ողբերգութիւն ի մաժն Ներէս. Տպեալ 1863.	4	
Ուխտ հայրենասիրի. Բ. Տպ. 1874.	4	
Ուսումն բարուց. Տպեալ 1857.	18	
Ուսումն տրանսպորտութեան. Տպեալ 1869.	3	
Պատմութիւն Ա. Գրոց. Տպեալ 1867.	8	
Պատմութիւն նոր կամարանի. Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Ա. Երուսաղէմի. քաղաքածոյ Մարգարինութեամբ. Տպ. 1872.	5	
Պատմութիւն Երուսաղէմի. աշխատասիրեաց Խորին վարչապետ. (‘)	8	
Պատմութիւն Ա. Լուսառոցի. Տպեալ 1867.	4	
Պատմութիւն Լէնկիթիներայ. Տպեալ 1873.	10	
Պատմութիւն Հայոց. Տպեալ 1870.	6	
Պատմութիւն բարոյական. Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Հայտառանեաց. առաքելական Ա. Եկեղեցւոյ. Տպեալ 1872.	16	
Պատմութիւն Երկամեայ պահպատութիւն ի Համբէստան. Տպեալ 1871.	20	
—Նոյնը՝ Գաղղիարէն լեզուաւ.	20	
Սաղման խոշորագիր. այլ եւ այլ անշամ տպուած.	10	
—Նոյնը՝ մաժ Գիրքով	6	
—Նոյնը միջակ՝ դպրոցներու համար. Տպեալ 1873.	6	
Նոյնը՝ փոքր Գիրքով եւ մամր Գրով.	3	
Ալման օրագիր. կազմեալ 1866 էն մինչեւ 1873. աշխարհիկ լեզուաւ.	40	
Սոսրագութիւն Երուսաղէմի. Տպեալ 1859. (‘)	4	
Ա արժութիւն փոխառաց մանկանց. Տպեալ 1868.	6	
Տանիկիլ տեղադրութիւն Երուսաղէմի. Տպեալ 1855. (‘)	3	
Տարերք. խամասակիրութեան. Տպեալ 1852. (‘)	6	
Տեսչութիւն հովուական. Տպեալ 1856. (‘)	8	
Տրամադանութիւն. Պատուելի Գրիգորի Փէշտիմալնան. Տպեալ 1855. (‘)	18	
Տօնացոյց. Տպեալ 1868.	10	
Քերպական. հին սնուկ. Տպեալ 1872.		20
Քերական Գաղղիարէն լեզուի. Տպեալ 1871.	2	20
Քերականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.	4	
Քերականութիւն Գաղղիարէն լեզուի. Տպեալ 1869.	3	
Քրիստոնէական համաօռա. Հայերէն եւ Արաքերէն լեզուաւ. Տպ. 1870.	2	
Օւացոյց եւ գուշակութիւնք օդոց.	1	

# ՅԱՆԿ

## ՕԳՈՍՏՈՍ

Կրթարան Աւետարանական բանից . . . . .	ԴԱՍ Ե .
—Անտարբերութիւն կրօնական . (Եար.) . . . . .	169—177
Ծաղկաբաղ Ամերիքական . . . Հաւատքով քալելը . . . . .	177—180
Ծաղկաբաղ Ամերիքական . . . Քրիստոս առ . . . . .	
Քրիստոնեայն . . . . .	180—181
Մանուկն եւ Քերովլէն . . . . .	181—182
Տարագիր Սոխակ . . . . .	183—184
Մեր Ճամանակուայ ոդին . . . . .	185—192
Ժամանակագրականք . . . . .	—192

---

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Միօնք ամեն կը հպատակականի 24 երեսէ բաղկացեալ մ. կու կէս ուժածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծավճ Մէջիային, հանգերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տեսարակ առնել աւզողը, պէտք է ամեն մէկ տեսարին շորս դահնեկան վճարե :